



99-8

7-26

N^o 6.

to G. H. W. W.

to G. H. W. W. G. H. W. W.

1875/85.

12004

3
09
2

P

✓

58-2-27 1221
7-1-1

491.99-8

556-647.114

7-26 **ԻՆՏԵՍԵՆՆ**


48

4073

Հատուկաբեր գրուածոց Հայ Մատենադրաց

ի պէտս ընթերցանութեան և թարգմանութեան ՚ի
Հայոց լեզուէ ՚ի Ռուսս

FORTE



Ի էր ճարտար չեմագործ-
յաննայն բանէ սոյն հան

Տ Փ Խ Ը Ս

1858 - Ռ Մ 2 Է

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Յ Ե Կ Ա Ր Ջ Ա Ն Ե Ա Ն Ե

31619-4.2

Տ Պ Լ Գ Ի Ե Յ Լ Ի

Հրամանաւ Բարձրաստիճան Վաթռ-ղիկոսի
Հայոց Տեառն Յովհաննու Վարբեցւոյ:

14525-58

Յ Լ Ռ Ե Ջ Ե Բ Ե Ն Գ

1/9 Պր. անու,
Երբ մայր հիշուցի ինքն
1875/88

Ուսումնական գրուածոցն նպատակն ՚ի սկզբանէ
անտի և այսրէ հեշտընկալ առնել զուսումն զինչ և իցէ
դիտութեան • որպէս առաջակայ դործոյս զչայ ընթեր-
ցանութիւն և զթարգմանութիւնն ՚ի շայոց լեզուէ
՚ի Ուսումն

Մանկունք ազգի մերոյ վարէին ցայսօր ՚ի դասա-
տունս պէսպէս դրեամբք • ոմանք սաղմոսարանօք, այլք
Ժամագրքօք և բազումք այլովք, յորոց էթէ ո՞րչափ
նուազ լինէր յառաջադիմութիւնն նոցա՝ անսուտ
վկայ է պակասութիւնն հայլաբան աշակերտաց ՚ի դպրոցս
մինչև այն թէ բազումք ՚ի նոցանէ քաջակիրթ երեւի
յօտար լեզուս քան ՚ի մերս բարբառ •

Վառավարութիւնն յայս կոյտ Վովկասու եղևալ
դպրոցաց զգործածութիւն միատեսակ դրոցն կարևոր պի-
տանութիւն համարեալ՝ յորդոր եղև մեզ ՚ի ձեռնարկ
դիւրատար մատենի այնպիսւոյ՝ որով հնար լինէր աշա-
կերտաց վարիլ յամենայն դասատունս միանգամայն, զոր
և մեք անձամբ աշխատասիրեալ և արդեամբք մերովք
՚ի լոյս ածեալ ընծայեմք ուսումնասէր մանկանց աղ-
դիս



Գլուխ Լ՞

Հարսու-խիբ բան: բարոյախանէ:



Որդիք են սկիզբն երջանկութեան ա-
մուսնացելոց: զի են վաղճան ամուսնական սիրոյ:

Մնավաստակ գտանի իսպառ այն: որոյ կա-
մեցեալ յուղղութիւն ամեւ վարուց զայլ՝
չառնէ սկիզբն յանձնէ իւրմէ:

Միբեւագոյն է խաղաղութեան քաղցրու-
թիւն, քան թէ զինուորական փառք:

Չիք ինչ մտերմագոյն՝ որպէս խիղճ մտացո

Որ հասուցանէ յունկն տեառն զայլոց մո-
լութիւնս, հասուցէ յունկն այլոց և զմոլու-
թիւնս իւրոյ տեառն:

Լնհաստատութիւն և փոփոխականութիւն
ընդաբոյս չար է մարդկութեան, այլ սեպհա-
կան առաւել մանկութեան:

Կիւրաւ սխալէ, որ յոյժ ամապարէ:

Որ քան փարթաւն է աղքատ: որովհետեւ
նա ոսկեոյն, այլ ոսկին տիրէ նմին:

Որ քան առանց պակասութեանց ծնանի: բա-
րի նա է: որ ունի պաշտօնութիւնս անկաւս կամ
փոքունս:

Բանի գլուխք են, նոյնչափ և կարծիք:

Ընդ է տուն իմ, ուր եմ ետ

Երեսարհու թիւն զբարեկամս և ճշմարտութիւն զատելութիւն ծնանիս

Երկուսարդք որ ձեռներէց են ի մեծ ամեծ մոլութիւնս, ընդունակ են և առաքինութեանց անծայր

Եւ յայէս կեամք, որպէս թէ ոչ երբէք մեռանելոց իցեմք

Եր և առաքինութիւն նաև յանհաւատս է յարդեւի և գողեւի

Չիք այնպիսի մատեան, զորմէ ոչ ոք խօսեացի չարս

Չամառ օտ և աննորոգեւի է ժամանակ կեանաց ամենեցուն

Որպէս որդն կրծէ զառաւել հասունացեալս ի պտղոց, սոյնպէս չարութիւնն յոլովակի զառաւելեալս ի լաւութեան

Եւ ևս է տալ զխոստացեալն, քան խոստանալ տալ

Սարդն բազում չարեաց իւրոց ինքն է պատճառ. զի ոչ ոք մնասի եթէ ոչ յիւրմէ

Սի տար ազատութիւն լեզուի

Տ՛ուր աղքատին, զի տացես քեզ. տուր քանզի զոր դուր տաս, ինքնդ ստանալոց ես. զոր ինչ ոչ տաս, շնորհի այլու մ

Եւ թաքանչիւր ոք կտրէ խաբել և խաբիլ այլ. ոչ ոք խաբէ զաւելնեսեան և ոչ ամենեքին զոք խաբեցին երբէք

5

Օրը ինչ ոչ գիտես՝ մի՛ հաստատուեր և մի՛
հերքեր:

Ո՛չ այ՛ չափ մնասէ թշնամի յայտնի, որչափ
բարեկամ կեղծաւորեալ զի յառաջնոյն դիւրին
է զդուշանալ չափաւոր արթնութեամբ, իսկ
յերկրորդէն և ոչ իւր օրինակաւ:

Քաւորդ դու որչափ ինչ և իցես՝ Աստուծոյ
ես և Աստուծոյ:

Ո՛չ որ այնքան ստեպ խաբէ որպէս այն, որ
դիւրաւ հաւատայ բանի:

Ո՛չ ամենեքին նորա բարեկամք են, որք
գունդագունդ գան մաշեն զսեամս մեր՝ ոչ ըզ-
մեզ ինդրեն, այլ զանձինս և զանձանցն:

Ի՞ մէջ չարաց չ' լինել չար՝ արհեստ է
դժուարին և բազում քրտանց արժանաւոր:

Կամի՞ս մեծ լինել ջանս փոքրիկ լինել յա-
ռաջացեալքն՝ ի մեծամեծս՝ նախ փոքրկացան:

Ան է մեզ պատշաճ, ընդ որ բարեկամք
մեր խնդան և թշնամիք մեր տրամին:

Ո՛չ որ կարէ երկուց տերանց ծառայել
կամ զմինն ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին
մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ:

Տգեղ է մասն, որ ոչ համաձայնի բոլորին:

Սարդոյ չ' է ըմբոն կեալ միայնակ, որում
միճակեցաւ անդուստ կենակցիլ ի հասարա-
կութեան:

Անդ (է) ոսկեղէն դար, ուր ամենայն ինչ
թեթեւագին (է) քան յամենայն տեղիս և կեանք
առողջ և հանգիստ:

Ոսկեղէն է դարա զի ոսկւոյն մատուցան ին՝
ժառք և ոսկւով ստացանի սէր:

Գնա՛ յուշիկ, ուր դժուարին են անցի:

Օոր ինչ կարող է առնել բնութիւնն, հնար
է առնել զայն և մարդկային ճարտարամտու-
թեան:

Ողբալի է զլեճակ հիւանդին, որ չ'զգայ
իւրում մահաբեր աստին, մանաւանդ կարծ է
լաւ լինել՝ երբ մեծաքայլ ի մահ ընթանայ:

Որձիութով տայ՝ կրկին սայ:

Սեծ արուեստ է գիտել ուրախ լինել:

Երկին հայրենի է գաւառ. երկիր վառ-
րանդութիւն. այն երանութեան սա թշուա-
ռութեան պնդաբերիչ:

Ի՛նչ ճարտար քիմիագործ. յամենայն բան է
ոսկի հան:

Ո՛չ է պիտոյ բժիշկ կարողացայլ հիւան-
դաց:

Սարդ է ժահտ, որ թոյն քաղէ ՚ի ծաղկանց՝
ուտի մեղուն մեղջ հաւաքէ:

Եթե մնա՞ մի րայս է մահ ընդ երկար լուևս
է միանգամ քաջութեամբ մտանիլ՝ քան միշտ:

Իւրաքանչիւր ոք յիւրոց գործոց գովի
կամ պարսաւի:

Օհնչ սգուտ է լիութիւն տանն՝ յորմամ
ընտանիք զիրեարս կրտորեն:

Կարի իսկ դժուարին է անկեւոյն յառնել
և ՚ի նոյն պատիւ ելանել:

Հանդերձիւք գառանց կերպարանին և
գործ զգայլոց գործեն:

Արոց խոստանայք բունիւ զբարիս, զնոյն և
գործով կատարեցէք. զի այն է հաճոյ առաջի
Աստուծոյ և մարդկան և գովութեան պատ-
ճառ ձեզ յամենայն բերանոց:

Ծեծեալ զերկաթ մինչ ջերմ է:

Մեծ մեքէ այ է տնտեսութիւն քաղաքի
ե. ՚ի շարժել զնա՝ չիք անիւ յարմարագոյն քան
զբարի օրինակ:

Պակասի մեծատան այն ամենայն՝ որում
ցանկայ այսինքն՝ զոր ինչ ոչ ունի. իսկ աղքա-
տին (պաղատի) այն ինչ միայն՝ որում հարկա-
պէտս ունի:

() Դրն՝ որոյ զօրավարն է իմաստուն և քա-
ջա՝ մուտ ՚ի զինուորական իրողութիւնս՝ ըտ
ամենայն մասանց պատշաճագոյն կտրավարի քան
զայն, որ յիմարութեամբ և յանդգնական բեր-
մամբ ուրուք կտրավարի:

Ահա զու մի և ձեռք երկու վիճակեցան մեզ
՚ի բնութենէ. յայտ է թէ՛ զի առաւել լիցի
մեզ գործել քան ի սէլ:

() Ը յօտարաց գտցես հաւատարիմ, էթէ
մաճինդ՝ քում եղիցիս թշնամի:

Որ կամի նորոգել զաշխարհ, յանձնէն
սկիզբն արասցէ. ապա թէ ոչ ՚ի զուր քրտնի:

Այր մի ՚ի հաղարաց մարթ է գտանել Լոբայց
կին ոչ:

Ոսկին թեպէտ և անբան է ձայնիւ, սակայն
մեծ ապէս աղաղակէ արդեամբք:

Վի բազդին է երևադ որձ ա՛ գեորդացեալ
երկիր ՚ի գործ արկանեւ, քան թէ գիտնոց լը-
տգէտան ածեւ ՚ի հաւ ա՛ ու թիւն:

Ա՛ր սղալին աչք, անդ սղալի և արոր-
ժակն, և ուր դիմամարտին դրամք, անդ յաղ-
թահարի արդարու թիւնն:

Ն՛մարտու թիւնն լուսաւորագոյն է քան
զարեգակն:

Աստք առաքինու թեանց քրտամբ և աշխո-
տու թեամբ բուսանին:

Մի յիմար յիմարեցու ցան է զհս զարու որս
Լաւ է ամենեցուն հաւատալ, քան իւրա-
քանչիւրոց, քան զի իւրաքանչիւ ըքն կայեն իաւ-
բեւ և խաբիւ, ոչ զք ամենեքեան խաբեոյն:

Ես միտ անմիտ համարեմ զայն կ' շնակար,
որ փոքր ոտից մեծամեծ կ' յիկս կա է:

Լուսքին անմտու թիւն յիմարի է համարեւ
զանձն իմաստուն:

Ա՛ր ոչ կարէ զոր կամի, կ' ամեացի զոր կարեւ
() որ ինչ կաւես առնեւ ինքնիդ, մի՛ յանձ-
նեացես զայն այլում ումեք:

Ա՛ռ ունի արհեստ, ունի պահե. ա՛

Ինդ բան և ընդ գործ բազում է խորոց:

Ո՛րում առ ձեռն է ժամանակ մի՛ սպա էս-
ցէ ժամանակի:

Ս՛լորու թիւնն է երկրորդ բնու թիւնն:

Լաւ է մի սնակ գնալ քան չարի ընկերանալ:

Լաւ ինձ ընդ ում գնաս և գիտացից յի՛նչ

գործ

գործ կատ

Ար ստանայ երկիր, ստանայ գորգի
կամին վրէժ սունու Լի թշնամու ոյդ, բարեիք
քաղաքավարե ոջիբո

Ար վաղարչէ գքեզ ասաւել քան զսովո
րականնս կամ գաւեալ է գքեզ և կամ զաւել
կամի:

Չար է այն խուր: որ ոչ ւել կամի

Ար բազում բարեկամս ինդրէ, սակաս
գայէ:

Ար այլոց ձեռամբ կերակրի, անագան յագի:
Լաւ է սերկեան ձու՝ քան վազուի հաւնե
Ար չիք կատու, մկունք կաքաւեն

Սակաւ խաղաղութիւն է 'ի տան, ուր մա
րին խոսի և արաղաղն լռէ:

Տաշտան զայ՝ գինի տայ, զոր ունի

Գլուխ Թ

Ընտան զարծանի:

իօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօիօ

Ըսն և Ըվիտ:

Շունն յերկունս գողով ինդրեաց 'ի հօ-
վուէն սեղի 'ի վարձու 'ի ծնանիլ անդ զոր ըն-
կալեալ կ'իկնեաց վերստին զաղայանս թող տալ
նմա անդէն սնու զանել զկորիւնս իւրս: Ապա
իբրև աճեցին կորիւնքն՝ շունն ապաստանեալ
'ի նոսա՝ յինքն գլաւեաց զտեղին:

Գլուխ

Գրայն անբարոտանէր զաղուխէ յաղագի
 գողութեան և նա ժխտէր ընտրեցին դատա-
 բար զ'ապիկն, որոյ լուեալ զփաստս երկոցունցն՝
 ասէ. դու՝ ո՞վ գայլ ո՞չ հաւատամ թէ կո-
 բուսեալ եցես զայն՝ զոր պահանջեանս լը գու-
 աղուէս. կարի իսկ հաւատամ թէ գողացեալ
 էցես՝ զոր ժխտեանս (Ո՞չ կամեցաւ կապիկն հա-
 վատալ և ո՞չ միումն զի երկոքին իսկ ՚ի ստե-
 սովորեալ էին) գուշասցիւք ՚ի սուր խօսու-
 թեանէ. զի որ ՚ի ստութեան միանգամ ըմբռնի՝
 ո՞չ լինի հաւատարիմ, յորժամ և զՆշմարիտն
 թախցէ:

Արտու: Խմբայ և Աւետի:

Տեսեալ անդամոց թէ որովայնս անգործ
 և դատարկ կացեալ զվաստակս իւրեանց ու-
 թի, միաբանեցան ոչ ևս տալ նմա կերակուր-
 բայց ՚ի նքողիլ որովայնին՝ ինքեանք ևս լու-
 ծեալ լքեալ թուլացան: Յայնժամ յայտնի ե-
 րևեցաւ գործ որովայնին, որ ոչ այ՛ չափ սնա-
 նի, քան թէ սնուցանէ: (Ո՞ի յինքն ընկալեալ
 զ'երակուրն՝ զտէ և պաղէ զայն և այնպէս
 յամենայն անդամս ըստ պիտոյից բաշխէ, որով
 քնան կենդանի:

Արտա- և Սերմարգ:

Արտա մի՛ գտեալ վետուրս թափեալս
 ՚ի սիրամարգէ՛ արկաւ զանձամբ և ապա՛ ար-
 համարհեալ զհնկերակցօքն՝ չոքաւ խառնիլ ընդ
 սիրամարգոս Սոյ ծանուցեալ զ՛ա ՚ի բայ խը-
 լեցին ՚ի նմանէ զփետուրն և հալածեցին վատ-
 թափեալ: Յայնժամ դարձաւ առ ընկերս իւր
 թախծագին, բայց չար և սեղև, զ՛ և նոքա ոչ
 կսմեցան ը՛ դունել զնա:

Այս պատահար ագռաւուն ուսուցանէ
 մեզ նախ՛ զի մի՛ յ՛ ժարիցեմք երևիլ առաւել
 քան զոր եմքս և երկրորդ՛ մի՛ բնաւ արհամար-
 հել զմեր նմանակիցս:

Հուն և հոգորակ իտոյ:

Հուն մի ՚ի լեղ անցանէր ընդ գետ ունե-
 լով ՚ի բերանի կոտորակ մտոյ՝ Տեսեալ ՚ի ջուր
 անդր զպատկեր իւր՛ կարծեաց թէ այլ շուն
 իցէ և այլ կոտորակ մտոյ և առ ցանկու թեանն
 յափշտակելոյ զնոյն՝ եբաց զբերանն և այնպէս
 ի թող անկանիլ և այնմ, զոր ունէր: Ասցուք
 շատանալ այնու՛ զոր ունիմք և մի՛ առաւել
 ցանկանալ զի առածն ասէ. որ յանչափս ձգտի՛
 րուի և ոչ ինչ:

Արտ- և Արտա-:

Արտ էսն տեսեալ ՚ի դագաթման ծառոյ
 զագ-

զագուստ մի, որ ունէր ՚ի բերանի կոտորակ մի
 պանրոյ, սկսաւ գովել զնա. զի արդ գեղեւիկ
 են, ասէ, Ֆետուրքդ և հասակդ վայելուչ
 է թէ երգել զիս էիր՝ ոչ կայր յամենայն թռչունս
 լաւաւոյն քան զքեզ: Իսկ անմիտն՝ կամուկեալ
 լսելի առնել զձայն իւր՝ եթող անկանիլ զպա-
 նիրն ՚ի բերանոյ իւրմէ և մնաց անկերակուր:
 Սի՛ խաբիցիմք ՚ի մարդոյ, որ գովեն զմեզ
 սակս անձն շահու:

Սանուհ ոմն և Նայր իւր

Սանուկ ոմն երթալով ՚ի դարոց, գողա-
 ցաւ զգրքոյկ միոյ յաշա՛րերտակցացն և տարաւ
 առ մայր իւր. ոչ խրատեալ ՚ի նմանէ՝ յաւել
 գողանալ զայլ իրս մինչև յաճել հասակին եղև
 գող անուանի և ըմբռնեալ՝ դատապարտեցաւ
 ՚ի մահ: Արդ՝ իբրև տանէին ՚ի տանջա՛ս, տե-
 սեալ զմայրն, խնդրեաց ՚ի բրու մի խօսել յա-
 կանջս նորա: Ս՛տ եղև մայրն և նա կալեալ
 ատամամբք զունկն նորա՝ ՚ի բաց կորզեաց: Եւ
 ՚ի զարմանալ ամենեցուն ընդ այս գործ՝ ասաց.
 դա՛ է սլատճառ մահուս իմոյ. զի թէ զիս խրա-
 տեալ էր դորա զառաջինն, ոչ արդեօք գտա-
 նէի ես յայս սահման:

Պարտ է ձեզ ո՛վ մանկունք արորժել ըզ-
 յանդիմանութիւն և զպատիժ ձերոց արտից
 վաղագոյն. վասն զի աճեն նոքա և արաւել
 ևս մեծանան:

Կոյր սնն և սապատու զն թ.

Կոյր ոմն ընդ առաջ եղև ումեմն սապա-
տողն մարդոյ վաղ քաջ ընդ առաւօտն. և ասէ
կոյրն ցմիւսն ծաղը առնելով զնա. կարծեմ բա-
զում ինչ ունիա գործել այսօր, զի վաղ քաջ
բեռնաւորեալ ես: Կամէր յաճիման հարկա-
նել զկորուծի նորա, որ թուեցու ցանէր բեռն
ինչ տանել ՚ի թիկունա: Լնդրէն սապատողն ետ
նմա պատասխանի. յիրա ՚ի ասես ցիս թէ դեռ
կանուխ է, զի չև է բացեալ բո բայց զմի պա-
տուհան: Լսու կատակէր զնա. քանզի միա-
կանի էր:

Գիւղական սնն

Գիւղական ոմն բարձեւը բեռն մի ժայ-
տիո ՚ի վաճառել թեպէտ և ստէպ աղաղակէր.
հայեաց, զգոյշ լէր, սակայն, անմիտ ոմն ոչ կա-
մեցեալ խոյս տալ ընդհարաւ ՚ի գիւղականէն
և պատառեցաւ վերարկու նորա: Եւ պահան-
ջելով ՚ի գիւղականէն տուծել զայն՝ ձգեաց
զնա յատենն իշխանին, շոյ լուեալ զամբաս-
տանու թիւնն՝ եհարց ցգիւղականն թէ ճիմա-
րիտ ինչ է: Սս բնաւ ինչ ոչ պատասխանեաց:
Լսա դատաւորն դարեալ առ տէր վերար-
կուին, ասէ, զի՞նչ կամիս դու զի արա-
րից համեր միում: Սա ասէ. զի՞նչ համր. չէ
նա համր. զի սակաւ մի յառաջ աղաղակէր
բարձրաձայն. հայեաց, զգոյշ լէր: Լսէ դատա-
ւորն. եթէ նա աղաղակէր, պարտէր քեզ ըզ-
դու.

Գուշանալ և այնպէս թէ պատուէր վերաբ-
կու քո:

Որմնադիր սին:

Որմնադիր ոմն գիպուածով անկաւ ՚ի
բարձրութենէ քանեացն՝ ուր գործէր և ըստ
յաջողելոյ բաղդին՝ անկաւ ՚ի վերայ առն միոյ,
որ նստէր ՚ի խոնարհ, որով առանց մեծ ինչ
վնասու անձինն՝ պան զողորմելի այրն: Որդի
մեռելոյն կոչեաց զորմնադիրն յանդիման դա-
տաւորի արեան և ամբաստանէր զնմանէ մար-
դասպան գու: Բայց որմնադիրն ապրեցոյց զանձն
ասելով: Բարեկամ, եթէ յանցուցեալ ինչ իցեմ
յանձն առնում զապաշխարութիւնն: Եւ գու-
ինքն ՚ի տեղին՝ ուստի ես անկայ և ես նստայց՝
ուր նստէր հայր քո, և գու ընկենլով զքեզ ՚ի
վայր՝ սպան զիս եթէ կարեո և ես հաւանեալ
եմ ընդ այս:

Մեծասուն սին և խոհմէր ի-ր:

Ըր ոմն երևել ՚ի միում առաւօտու հա-
րեալ յանսովոր բաղդէ՝ կոչեաց զսոհակեր իւր
և հրամայեաց նմա պատրաստել վաղվաղակի
զճաշն: Ըսէ յիս խոհակերն դեռ չ'և ևս տասն
ժամք են: Գոյն ժամ պատասխանի ետ տէրն, ինձ
զ' փոյթ է թէ չ'և են տասն ժամք, մինչ յիմում
խախտացցի տ, դէն: անցեալ է միջօրէն:

Ածախոսութեան և հարստութեան

Ածախոսութեան ունի մեծատուն բայց
 թանձրաբարոյ ետ արձանագրել զհւր օրատկեր
 ՚ի մարմարիոնի և ցուցեալ զայն միում ՚ի
 բարեկամաց՝ եհարց ցնա թէ արդեօք քաջ նմա
 նեցուցեալ իցէ անդրիագործն: Արում ետ պա
 տասխանի լի բովանդակ՝ քանզի նման է քեզ
 ՚ի հոգի և ՚ի մարմին:

Գեշտի գառութեան իւրաքանչիւր

Ամաստասէր ունի հարցաւ թէ ընդէր կու
 թայ և կաղաց ողորմութիւն լինի առաւել քան
 իմաստասիրաց: Մտ պատասխանի այն իմաս
 տուն վանն զի առաւել երկիւղ գոյ լինելոյ
 կոյր և կաղ քան իմաստասէր:

Յիշատար և էլ նշան

Յիշատարդ մի յամանային ժամանակի
 կամեցեալ յԱծախոսութեան լի Սեգարայ քաղաք
 էլ մի կաղաւ ՚ի վարձու և ՚ի Ծանապարհի ՚ի
 սաստկանալ տապոյ արեգական՝ էջ նստաւ ՚ի
 ներքոյ իշոյն ՚ի ստուեր նորա ի կտէր իշոյն
 վանէր զնա անտի ասելով զու զէն ՚ի վար
 ձու կալար յինէն և ոչ զստուեր նորա և նս
 անքէր թէ ընդ իշոյն և զ ստուերն կալայ:

Պնալով գնային ծառայ ընտրել Ի-րեանց
 Թագաւոր և ասեն զձիթենին, Թագաւորեան 'ի
 վերայ մեր և ասէ ցնոսա ձիթենին, Թողից ըզ-
 արարառութիւն իմ, յորս փառաւորեաց զնա
 Լստուած և մարդիկ, և երթայցեմ իշխել
 ծառայութիւն Եւ ասեն ծառայ ցլ զենին, եկ և
 Թագաւորեան 'ի վերայ մեր, և ասէ ցնոսա թը-
 զենին. Թողեալ զքաղցրութիւն իմ և զբերս
 բարութեան իմոյ, և երթայցեմ իշխան լինել
 վայտից: Եւ ասեն ծառայ ցործն. եկ և Թա-
 գաւորեան 'ի վերայ մեր և ասէ ցնոսա որթն,
 Թողեալ զգին ի իմ և զուրախութիւն Լստուածոյ
 և մարդկան և երթայցեմ իշխան լինել վայտից:
 Եւ ասեն ծառայ ցդժնիկն. եկ և Թագաւորեան
 'ի վերայ մեր և ասէ դժնիկն ցծառս.
 Թէ արդարև օծանիցէք զիս Թագաւորել 'ի
 վերայ ձեր, եկայք և ծածկեցարուք ըդ հո-
 վանեալ իմով. եւ օհ ոչ ելանիցէ հուր ի դը-
 ժնիկ աստի և կերիցէ զեղևնավայտս լիբանա-
 նու:

Գաղ 116

Պողոսն դատապարտեալ առ 'ի մահ՝ իբ-
 րև ընթեռնու ին զդատակնիքն, յորում նշանա-
 կեալ կային ոճիրք նորա՝ ասէր անդադար. չար
 ևս գործեալ է իմ: Զարցին ցնա՝ թէ զի՞նչ
 ինչ չարագոյն գործեալ իցէ. ետ պատասխանի-
 այն՝ զի Թողի անկանիլ 'ի ձեռու:

ԼՅԼ և գայլք

ԲՆԵՈՒ ԵՐԿԻՍԹԻ միեւալ երբեմն ՚ի սմբակ իշոյն՝ տանջէր զնա սաստիկ. և տեւեալ նորա զգայլ. զի ընդ այն անցանէր, աղաչեաց զնա գալ հանել զբւեռն: Իսկ գայլն, գլխացեալ ՚ի նա, իբրև կալեալ ատամսմբք ՚ի քաց ձգէր ըզբւեռն՝ էշն մոռացեալ զցաւս իւր. կիցս արձակեաց և անդէն խորտակեաց զծնօտ գայլոյն և թողեալ զնա փախեաւ: Յայնժամ ասէ գայլն ընդ միտս իւր. արժանապէս դիպաւ քեզ այդ. զի դու մնագործ էիր և զի՞ պիտէր քեզ զլայտառու թիւն առնել:

Բ. և արծիւ

ԲՈՒ հրեշտակ օտաքեաց ան արծիւ և ինդրեաց զդուստր նորա հարսն ասելով. դու տուիջեան քաջամարտիկ ես և ես գիշերոյ պատշաճիմք ՚ի ինամուծիւն: Եւ յետ բազում թախանձանաց յանձն էառ տալ. և ՚ի լինել հարսանեացն ՚ի տուէ՛լոյս ոչ կարէր տեսանել փեսայն և ծաղր առնէրն բազմեալքն. և իբրև եղև գիշեր՝ և ոչ հարսն ետես լոյս. յաճախեաց և անդ այլանու մն և վասն այսորիկ փութով լուծաւ հարսանիքն:

ԼՅԻ ռն և ռև ֆե

ԼՂԲՕՐ ՈՒՄԵՄՆ ԵՐԼԵԿԿԱՆ զԵՆ՝ ԵՂԵԱԼ ԻԲՐԵ-

իբրև զ՛րեշտակ լուսոյ և ասէ ցնա . ես եմ
 Պաբրիէլ հրեշտակ Ա. տու ծոյ և առաքեցայ առ
 քեզ : Իսկ եղբայրն ասէ . տես գուցէ առ այլ
 ոք առաքեցար, զի ես ոչ եմ արժանի տեսու-
 թեան հրեշտակի Աստուծոյ և դեն ՚ի նմին
 ժամու հալածեալ ՚ի խոնարհութենէ նորոս
 անյայտ եղև :

Իստուքիս երեսասաներորդ

Ի ուղղիկոս երկուսասաներորդ կամ ցեօլ
 պատերազմ յարուցանել ընդ դքսին մե դիողա-
 նոյ՝ եհարց Յակոբայ թրիվու լլիոսի վորձ զօ-
 րագլխի թէ զի՞նչ պատրաստութիւն առաւե-
 լապէս կարևոր իւէ . որում պատասխանի ես
 թրիվու լլիոս . երեք ինչ կարի կա՞ւ որք են
 դրամք , դրամք և դարձեալ դրամք :

Թշտնի

Վարցաւ ցի՛ զենի թէ զիւրդ է զի բազում
 սոսս առ երկրաւ տարածանեսս : Եւ աւէ .
 քանզի բազում են թշամիք իժ , և ես խոնար-
 հիմ զի մի՛ ստակոտոր եղեցի Նսխ քան զելա-
 նելն յիս՝ յագեցուցանեմ և մոռանան զչարութիւ
 Կրատէ զմեզ առակս խոնարհութեամբ և
 սեղանօք և քողջրութեամբ ընդ առաջ ելանել
 թշամեաց՝ յորժամ ստնանիլ ոչ կարեմք զի զի-
 ջանիցին ՚ի դառնութենէ բարուց և մոռանան
 զչարիտ :

Արարած լուսնն և ծագի նորայ

Երևում թռչունն ունէր ձագս յանդամ
 տանի ուրեմն՝ որ մօտ էր ՚ի հունձս. որոց չ'ե
 ևս էին բուսեալ փետուրք: Եւ զնալ սորա եր-
 բեմն ՚ի խնդիր կերակրոյ վասն ձագուց իւ-
 րոց՝ պատուէր ետ նոցա. զի եթէ նոր ինչ իրք
 դիպեսցին անդ, կամ բանս ինչ լուիցեն խօսիլ
 ուշ դիցեն, և ՚ի դառնալն նորա՝ պատմեսցեն
 նմա: Եւ ահա ՚ի նմին պահու իբրև գնաց նա,
 եկն տէր անդաստանին և ասէ ցորդին. տեսա
 ներս որդեակ՝ զի հասեալ են հունձք. արդ՝ առ
 վաղիւն ընդ այգանալ առաւօտուն գնացեալ
 աղաչեալ զբարեկամս, զի եկեալ օգնեսցեն մեզ
 ՚ի հունձս: () այս ասայեալ՝ մեկնեցաւ անտի
 Եբրև դարձաւ արտուտն, ձագքն դողմամբ
 մեծաւ և երկիւղիւ ճուռ դէլով շուրջ պա-
 յարեալ զմայրն՝ ստիպէին զնա անհնարին տագ-
 նապաւ՝ փութով փոխել զնոսա անտի. ասա
 թէ ոչ առ հասարակ ՚ի կորուստ գնացուք ա-
 սեն. զի տէր անդաստանիս առաքեաց զորդին
 կոչել ՚ի վաղիւն զբարեկամս ՚ի հնձել զսա:
 Եւ մայրն քաջալերէ զնա մի ինչ հոգալ.
 զի եթէ տէրն, ասէ, զհունձս ՚ի բարեկամս ա-
 րար ասպատան, առ վաղիւն, ոչ հնձեսցի ան-
 դաստանս. վասն այնորիկ չէ հարկ այսօր փո-
 ՚ի ել զձեզ աստի: Եւ վաղիւն գնաց դարձեալ
 մայրն ՚ի գիւտ կերակրոյ, և տէրն եկեալ մայր
 բարեկամաց և ահա օրն տարածամէր և բա-
 բեկամքն ոչ ուրեք երևէին: Յ յնձամ ասէ.
 կարի յապալեցին նոքա. արդ՝ գնացեալ աղա-
 չեսցուք զսզգալանս մեր և զմերձաւորս և
 զերացիս, զի վաղ ընդ առաւօտն եկեալ հնձես:

33203

Կեն ընդ մ. զ. Րնգ որ ձագքն վերադին յահի
 եղեալ. առաջին զայն մօրն ՚ի դառնալն նորա-
 և նա սատե նոցա հանդարտ և յանհոգս կալ-
 զի սզէակն ք և մերձա որք, աէ, չեն այնչափ
 յօժարամիտք ՚ի գործ այլոց, մինչև իսկ և իսկ
 ՚ի կատարու մն գործոցն փութալ: Այա աւէ-
 այժմ ու շ դէք, թէ զնչ խօսեացի տէրն ինչ: ՚ի
 վաղիւն գիացեալ թոչնայն վերադին վասն կե-
 րակրոյ՝ ազգականքն, յապաղեցին գալ ՚ի գործ,
 յոր կոչեցան: Այա աւէ տէրն ցորդին, ահա
 բարեկամք և ազգայնք մեր ստեցին մ. զ.
 արդ՝ առ վաղիւն վաղայարոց լեււլ բերցես
 ընդ քեզ երկու մանգաղս մի՝ վասն իմ և միւս
 ևս՝ վասն քոյ. և մէք միզէն հնձեացուք զան-
 դառնանս. զի չիք օգուտ ՚ի նոցանէ: (այս
 իբրև լուա մայրն ՚ի ծագուց՝ աւէ. ահա արդ
 ժամ է մեկնելոց ատի. զի ստուգիւ լինի այն.
 քան զի ոչ ևս յայլ որ լինի ապաստան գործն:

Ինտոպատէր ոմն և գեղագործ


Յաջորդեցին ինաստատէր ոմն տուն շինեաց
 և գեղագործ ոմն ասաց ցնա. ծեփեալ զտուն
 քոյ, զի եկեալ գեղեցկացուցից զնա զանազան
 նկարուք սրակերաց և անկուածոց և յօրի-
 նուածովք: Ասէ իմաստասէրն. եկ յառաջ նկա-
 րեալ և ապա ՚ի վերայ ծեփեից. զի զգարչելուն
 ծածկելն է բարւոք քան յայանելն:

Արժիւ և բար

Յորժամ կամ էր արծուի ընտրել զգե-
ղեցկագոյնս ՚ի ձագուց թռչնոց իւր սպասաւորս
՚ի պատիւ մատոյց բու զիւր ձագս և ասէ .
ան զտաս արքայուհիդ, որք գեղեցիկ են քան
զամենայն ձագս, զի նման են ինձէ:

Գլուխ Գ. Ե

Օանձիւնիւնք աշխարհագրականք:



Անուն Հայաստան

Անուն Հայաստան, հասարակ և սովորա-
կան յազգի մերում, անծանօթ է բնաւ առ
օտար ազգս ՚ի սկզբանէ անտի. այլ նոքս յա-
նուն Արամայ, որ եօթներորդ է ՚ի Հայկայ,
կոչեն զաշխարհս Հայաստանեայց իւրաքանչիւր
ազգք ըստ իւրեանց բարբառոյ այլայլելով: Տա-
ճիկք կոչեն Արմէնիստան. Իտալացիք և այլ
Եւրոպացիք ըստ մեծի մասին Արմէնիա, Եւրո-
պացւոց աշխարհագիրք և աշխարհացոյցք և այ-
լով անուամբ կոչեն զՀայաստան, որ է թիւրք-
մանիստան կամ ըստ հնչման իւրեանց թուրքօմա
նիա, մինչև յաշխարհացոյցս ինչ տեսանի գրեալ
թուրքօմանիայ կամ Արմէնիա. որպէս թէ՛ նոյն
էր աւել Հայաստան և նոյն թիւրքմանիստան օ

Օայս յ

Օայս անուն տան Հայաստանեայց վան թիւ քմ
ման ժողովրդեան, որք իբր ՚ի ժամ դարուն հա-
տուածեալք ՚ի թուրքաստան աշխարհէ ի-
րեանց՝ եկեալ բնակեցան ՚ի Հայաստան, բայց
՚ի կողմն ինչ նորաւ ոչ ընդ համօրէն Հայաս-
տանու ստի առ առաւելութիւն զայն կողմն բնա-
կեալ ՚ի թիւրքմանաց պարտ էր կոչել յա-
նուն նոցա և ոչ զողջոյն Հայաստան:

Ամասախանութիւն Հայացի

Յամենայն ժամանակի Հայք անձնատուր են
վաճառականութեան Յորժամ կառավարեալ
լինէին ՚ի ձեռս իւրեանց թագաւորաց՝ էին
ժարթամք և կարողք. զ՚նի անկեալ գո՛ւով ընդ
Տէրութեամբ Տաճկաց և Պարսից՝ սկսեցին
զվաճառականութիւն իւրեանց ընդ համօրէն
Եւրոպա մինչև ՚ի սահմանս Արևելեան աշ-
խարհաց: Իբր ՚ի յեւս եօթօնև տասներորդ դա-
րու էին ՚ի համարի ՚ի Հօլանդա և Պատալիա-
անէին սուր և անութիւն յամենայն սահ-
մանս Օմանեան Տէրութեան ընդ Իզմիր և ընդ
Հալէպ. տիրէին յայնժամ սուրևանութեան
Պարսից և Ռէխտ և Գո՛ւղայ. քաղաքաց. փու-
խաղրէին զվաճառս իւրեանց ՚ի խորին սահ-
մանս այսր տէրութեան և ՚ի զամաք կղզիս
Ճիզկաց: Յորչափ Պարսկաստան կայր մնայր՝
յանդորրու՝ վաճառականութիւն նոցա մնայր
յիւրու մ' պայծառութեան. բայց Հարախաւար՝
ձախորդութիւնք Հաս ձիւսէ յինի և իւրոց
սահմանաց՝ ածին վնաս դժնդակս ՚ի գործ
ամ:

բանու թիւնս սոցա . բեռնաւ որեւալք ընդ յորովք
և տառապեալք ՚ի ներքին պատերազմաց՝ արկա-
րանային զբազեալք զպարտութիւնսնց :

Ս. Կ. Բ

Ս ան ՚ի հնումն Շամիրամակերտ՝ մի ՚ի
հին քաղաքացն աշխարհի՝ փաշայանիւտ մայրա-
քաղաք համօրէն նահանգին , բերդաքաղաք և
պարսպապատ կրկին քարաշէն պարսպաւ : Ի
մէջ առաջնոյն և երկրորդ պարսպին՝ է դա-
տարկ առանց ինչ բնակութեանց . շուրջ զերկ-
րորդ պարսպան՝ է խռամ, ուր ՚ի ժամանակս
պատերազմի մարթ է արձակել ջուր ՚ի մերձակայ
առատահոս ջուրց : Այն այս խռամ պատեալ
է խոնարհ պարսպաւ առ ՚ի վերունել զթումբաւ :

Ի Հիւսիսակողմն քաղաքին ուղղաձիգ
բարձրացեալ կայ քարալեւան , յորոյ գլուխն
ոչ հպանի ըսմբ հրազինաց և յորում շի-
նեալ կայ ՚ի մեծագործն Շամիրամայ անառիկ
բերդն Սանայ : Այս լեւան , որ է որձաքար
վէր սեպղէհ , ձգի յարևելից յարևմուտս յըն-
թացս միոյ ժամու : Առ ստորոտով լերինս սկսա-
նի անմիջապէս ՚ի հարաւակողմն պարխոպ քաղա-
քին , որ է տափարակի : Այս լեւան և բերդ հե-
ռի անկանի ՚ի ճովէն իբրև կէս ժամաւ :

Արտաքին կողմն լերին այսինքն է՝ հիւսիսա-
կողմն , որ իջանէ ՚ի դաշտավայրն , է դար
զառ ՚ի թափ անհնարին լի քարածեռ առապա-
րիւք : Բնդ ժամանակս ժամանակս կործանին
այս պարխոպ և նորոգին . զորօրինակ՝ կործա-
նե-

նեցաւ մին ՚ի պարսպաց աստի և յերկրաշարժ
 ժութեանն՝ զորմէ պատմէ Ա՛ռաքել:

Ն՛յն է:

Ա-թ եկեղեցիք են Հայոց քարաշէնք և
 բնակիչք տունք իբր տանն հինգ հազար, յորոց
 երկու հազարքն՝ են Հայոց իսկ մնայեալքն
 հաճկաց, որք ըստ մեծի մասին են գրեալք՝ ՚ի
 զինուորութիւն յորդւոց յորդիս: Ա՛հազար վեց
 հարիւր քառասուն ութն մեծապէս անշքացաւ
 այս քաղաք յահագին երկրաշարժութենէ, յոր-
 մէ պարսպք բերդին ըստ մասին կործանեցան:
 Եկեղեցիք Հայոց ոմանք՝ իսպառ քանդեցան, և
 ոմանք՝ ըստ մասին, և մեծ մասն տանց և ապա-
 րանից և այլոց շինուածոց՝ հիմն ՚ի վեր տապա-
 լեցան, ընդ որովք մեռան անբաւ բազմութիւն
 մարդկան և անասնոց: Ա՛յս սառունութիւն երկ-
 րի, որ սկսեալ յերկրորդ օրէ Ա՛պրելի ըստ հին
 սոմարին տեւաց մինչ ցելս Յուլիի՝ ապակա-
 նեաց նաև զհամօրէն շքակայ սահմանս Ա՛ա-
 նայ՝ քանդելով զբազմութիւն եկեղեցեաց և
 վանօրէից, զորս մի ըստ միոջէ թուէ Ա՛ռաքել
 պատմագիր:

Ն՛աւ է:

Վիւղ միով ժամաւ հեռի ՚ի ծովէն ՚ի
 հարաւակողմն նորա և ութն ժամաւ հեռի ՚ի քա-
 ղաքէն Ա՛ւնայ: Ս՛երմ ՚ի գիւղս՝ է Նարեկայ
 վանք:

վաճառքի որոյ կրկին են տաճարք քարաշէնք հան-
 դերձ կաթնուղիկէի կից իրերաց յանուն լու-
 տուածածնի և քանուն սրբուհոյն Սանդիտոյ:
 Օայս մենաստան բնակեցաւ սուրբն Պարիգոր
 Կարեկացի: Օսրեւելեան կողմն եկեղեցւոյն
 կսեալ ընդ նմա՝ է ժամատուն, յորում է գե-
 րեզման սրբոյն յետկոյս խորանի սրբոյն Սան-
 դիտոյ: Լու Կարեի գեղջն յարեմուտս հիւ-
 սիսոյ ծորա ի ծոփն կոյս՝ է լեւան ապառաժու տ
 հանդէպ լուտէր կղզւոյն, յորում են այլք վեցք.
 երեքն՝ ստորեք և երեքն՝ ի վերոյ, յորոց ի մի-
 ումն գոյ և սեղան, որ էր տեղի աղօթից Կա-
 րեկացւոյն, ուրանօր ի ծոփն հայելով ետեա-
 լուրք կշտն:

Էջիւ

Ի իմ մեծ քան զամենայն կղզիս Սանայ ծո-
 վանքառատուն կամ յիսուն միոնաւ հետի ի
 կղզւոյն լուղիտամարայ՝ յարեւելս Զիւսիսոյնորատ
 Է ի սմա մենաստան և եկեղեցի յանուն սրբ-
 բոյն Պարիգեայ, յորում ամփոփեալ կայ մանս
 ինչ յոսկերաց սրբոյն: Ի Սիմ բնակին սո-
 վորաբար իբրև հարիւր անձինք, այլ չիք
 բնակութիւն աշխարհիկ տանց և ոչ թոյլ տան
 մտանել կանանց: Են ի նոսա լուպիսկոպոսուհի
 արեղայք և մշակք աշխատաւորք, հրաժարեալք
 զամն սղջին ի մեղիւնաց և միայն բանջարեղի-
 նօք, արմաեօք և կաթնեղինօք շատացեալք:
 Կիմուգամ միայն ի հասարակ աւուր մաշենուր
 է մը տեսակ կերակրոյ: Ար կամի՝ ի սեղանա-

Ս. 4.:

Բերդաբաղաք գլխաւոր յիւրում վիճակին կառուցեալ առւտորոտով լերին միոյ: Աստանօր է մենաստանն մեծ՝ կոչեցեալ Ամենափրկիչ, յորում է գերեզման Գասբարայե զոր աւեն լինել մին յերկոյ մոգուցն, որոյ ՚ի դասնալն ընդ երկուց մոգուց յարուսաղեմայե ՚ի յօթեանիլն աստէն՝ վաղճանեցաւ աւեն և աւաթաղեցաւ, յորմէ թեւս կոչեցաւ և անուն տեղոյն Սոգս: Ի հին կոնդակ ինչ վանացս պատմի ըեալ այսպիսի իմն սքանչելիք: Ի բանակիլ Անկիթիմուրայ յայսմ վայրի՝ բնակիչք երկրի յորդորմամբ առաջնորդի վանացս զաւուրս երես կերակրեցին զզօրս նորին. փոխանակ այժմ Անկիթիմուր խոստացաւ առաջնորդի վանաստաւ զոր ինչ և խնդրեացէ: Իսկ առաջնորդին զայս միայն խնդրեալ ՚ի նմանէ. շնորհել նմա զայնչափ գերիս ՚ի Հայոց՝ որչափ ինչ մարթէր հաւաքիլ յեկեղեցի մենաստանիս և հաւաքեցան ՚ի նմանէ սքանչելեօք եօթանասուն հազար գերիք, զոր ոչ կարէր տանլլ: Իսկ ՚ի տրտնջել վասն այսր զօրացն բռնաւորին՝ հրաման ետ երթալ առնուլ զնոսա. բայց սքանչելեօք Տեառն պահեալ զնոսա ոչ ոք ՚ի զրաց կարաց երբէք գտանել կամ տեսանել զմենաստանն: Սասն այսորիկ կոչեցաւ ապա մենաստանն՝ Ամենափրկիչ:

Երբ արաւսք գլխաւոր հեռի Արախ
 քեայ իբր հինգ ժամաւ ընդ Արեւել նորա
 կառուցեալ ի տափարակ դաշտաւայրի պատեալ
 լերամբք: Ի իրք նորա թեպէտ մեծ է և ըն-
 դարձակ. այլ գրեթէ կիսով չափ աւերակ է
 այժմ և անբնակ: Առաջնորդ քաղաքիս է նա
 ինքն կաթողիկոսն, բայց նստի ի բրև փոխա-
 նորդ այլ առաջնորդ ի մ. նաստանն կամ յա-
 նապատն սրբոյն Աննիայ, որ իբր կէս մղոնա-
 արտաքոյ է քաղաքին յարևելից ձիւսիտոյ:
 Եարտին, որ ճանապարհորդեաց յայսոսիկ կող-
 մանն ի հազար վեց հարիւր եօթանասուն մի-
 նէն մինչ ի հազար վեց հարիւր եօթանասուն
 երեք մերձ ի յառաջնորդարանն Արևանայ
 դնէ աշտարակ և այլ հին շինուած ասելով.
 մերձ յառաջնորդարանն է հին աշտարակ ինչ
 ի բառակուսի քարանց, զորոյ զորինակն եդի
 աստանօր: Այ կարացի բնաւ գտանել ոչ զժա-
 մանակն յորում շինեցաւ և ոչ զշինողն և ոչ
 թէ յինչ պէտս: Արտաքուստ երևին մակա-
 գրութիւնք, որոց տառք նման են ձայոց և սա-
 կայն նոյն իսկ ձայք ոչ կարեն ընթեռնուլ:
 Այս աշտարակ է գործ ինչ վաղն Չական և ճար-
 տարապետութիւն բողոքովին տարբեր, ի ներ-
 քուստ է գատարկ և մերկարտաքուստ և շուր-
 ջանակի՝ երևին աւերակք բազումք կաթաւ
 իմն, որք ցուցանեն թէ էր անդ շրջապատ շի-
 նուած ինչ, յորում կանգնեալ կայր այս աշ-
 տարակ:

Ն ս Ի ի Ղ և ան է

Քաղաք պարսպապատ կառուցեալ ՚ի դաշ-
տի ՚ի հիւսիսակողմն Լըրասխ գետոյ հեռի ՚ի
նման է՝ իբրև երեք ժամաւ և ՚ի Սասիս լինէ՝
երկու աւուրբք: Թառաջին ժամանակս էր սա-
մի ՚ի մեծամեծ և ՚ի բազմամարդ քաղաքաց-
այլ այժմ անշքացեալ կայ յառաջին բարեզար-
դութեանէ իւրմէ ՚ի պատճառս պէսպէս աւմանց
և աւերմանց յԱղուանից: Լ ՚ի են ՚ի սմա աւե-
րակք պէսպէս շինուածոց և մզլիթաց, յորոց
զմին՝ որ է երևելի՝ ասեն լինել կառուցեալ ՚ի
միշտակ գերեզմանին՝ Ն ՚ի: Լ ՚րոտք: յ քաղա-
քին առ վտակաւ է աշտարակ գեղեցկաշէն
կառուցեալ ըստ ոմանց ՚ի Լէնկիթիմուրայ:

Մ և ս ս ՚ի Կ և ՚Մ Էբաստիւտ

Մ և ս ս կառուցեալ է ՚ի դաշտավայրի է
Աւրեք ուրեք երևին անկեալ հատորք նախնի
տարսպին, զոր կործանեաց թիմուրլէնկն: Լ ՚ն ՚ի
Մ և ս ս բազում ինքնաբուղիս աղբիւրք,
մզլիթք, ուսումնարան, որ աւանդի լինել ա-
պարանք Սենեքերիմայ արքային Սասպուրա-
կանի: Օթիւ բնակչաց քաղաքիս ասեն լինել
իբրև տասն հինգ հազար տուն. իսկ այժմ
ասեն լինել տասն հազար, յորոց իբրև երկու
հազար տունք՝ են ազգիս Հայոց. իսկ մնա-
ցեալքն՝ հաճկաց:

Գառաւորի 'ի հն' Մոծաւ:

Բերդաքաղաք սորա կառուցեալ 'ի գեղեցիկ դաշտավայրի իբրև վեց կամ ութ ժամաւ հեռի յԱջմիածնէ, ուստի բերեն ձկունս մեծամեծս հանեալ յիւր ծովէն, որոյ մին կշռէ երկու և երեք օգգա և յանուն սորա կոչեն գեղարբունոյ ձուկն: Սերձ առ սա՛ է Սեանու ծով կամ Գեղարբունոյ ծով, որ 'ի հնումն կոչէր ծով Գեղամայ կամ Գեղարբունոյ, յորոյ անուն և Պարսիկք՝ ըստ վկայելոյ Հարաինի՝ կոչեն Տերէի շէրին այսինքն ծով գեղեցիկ, որ է թարգմանութիւն Գեղամայ ելեալ 'ի բառէս քէշ կամ քէշէշի: Չուր սորա քաղցր և է երևելի լիճ 'ի մէջ աշխարհի յայն կարգ լճից՝ որ բղխեն գետ:

Լճ գածին:

Ի մենաստան ավթոռ Սրբազան Կաթուղիկոսի՝ շայոց կառուցեալ 'ի դաշտավայրի, որ ընդ մէջ երկուց լեռանց Լճադաճին և Սասիս լեռին. զԼճադաճ 'ի ձիւսիսոյ ունելով և ըզՍասիս 'ի ձարաւոյ: Երկայնութիւն դաշտավայրին է հնգօրեայ ծանապարհ և լայնութիւն իբրև երկօրեայ՝ հեռի յԱրևանայ իբրև երեք ժամաւ ընդ Լճումուտս նորա: Սենաստանն պատեալ է շուրջանակի պարսպաւ, որոյ են դրունք չորս և միւս ևս փոքր. զայն պարիսպ նորոգեաց յաւուրս մեր Սմէճն Կաթուղիկոսն: Լճաքոյ պարալի Աջմիածնի 'ի ձիւ-

Հիւսիսային կողմն է մեծ գիւղ Հայոց կոչեցեալ նշուէս ԼՅմիածին, իբր ՚ի տեղւոջ նախնի Աղաթաշապատ արքայսնիստ քաղաքին: Այ գիւղ յառաջագոյն կից էր ընդ պարիսպն սե- նաստանին ՚ի Հիւսիսակողմանէ նորա. այլ ՚ի ժամանակս նորոգութեան պարսպին ՚ի Ամէնի Կսթուղիկոսէ՝ փոքր ինչ հեռացուցին: Արտա- քոյ պարսպին առաջն դրանց նորա, որք կոչին Պազարապատ և Տէրվազ, ՚ի տեղւոջ ուր է ջրաղացն՝ ասեն լինել զսպարանս Տրդատոյ թագաւորին, ուր և երբեմն ՚ի բրելն՝ գտաւ ընդ երկրաւ մարմարիոնեայ քար:

ՍԻ ԲԵՆԷ

Հին քաղաք աւերակ, որ բոլորովին քան- դեցաւ բոտ մասին յաւազակաց և բոտ մասին ՚ի ժանտախտէ ՚ի ժամանակս երրորդ սուլդան Կուստաֆայի: Այժմ են ՚ի սմա քանի մի բնա- կարա՛ք Բրդաց և փոքրիկ մզկիթ. իսկ ար- տաքոյ՝ է մեծաչէն եկեղեցին սրբոյն Յակով- բայ՝ կիսով չափ թաղեալ ընդ երկուս, ուր ՚ի վերուստ անտի ընդ ծերպ ինչ իջանէն յեկե- ղեցի. ՚իներքուստ տա՛լաւին ունի զիւր նախ- նի վայելչութիւն յերկուց կողմանց կամարա- կապ հաստատեալ ՚ի վերայ սախտակ կճեայ մի- առանի սեանց: Պասպանութիւն եկեղեցւոյ՝ է ՚ի ձեռս գիւղա՛լանաց ոմանց յազգէս Հայոց:

Սեւ

Յառաջին ժամանակս սեփհական էր սա փոխարքայն միանգամայն ընդ կ'արքոս կղզւոյն: Այս քաղաք ունի շրջանակի պարիսպ 'ի մեծամեծ կոփածոյ վիմաց: որ ուրեք ուրեք է քայքայեալ և ուրեք ուրեք ևս պակասի. զի բնակիչք 'ի կերանուն զ'էմն 'ի պէտս այլոց շինուածոց: Այն պարիսպ շրջապատելով ձգի մինչ 'ի գլուխ քարալճուր լերին, ուր է բերդն զարդարեալ անտարակօք, յորում տեսանին և աւերակք հին շինուածոց: Բղխէ 'ի նմա և ջուր պատուական:

Ի հին շինուածոց Ուրբինեանց մնացեալ կան այժմ եկեղեցին սրբոյն Սոփիայ, մասնին ջրագաւորական պալատին և բանտն կամ գանձատունն: Ս'օտ առ այս եկեղեցի է և նախնի անարանք Ուրբինեանց կամ որպէս կոչեն դաբնաս, որ է բոլորակաձև շինուած յահագին կոփածոյ վիմաց երեք և չորք գրկաչափ մեծ ու թեամբ:

Թեւրիչ 'ի հն' Վաւրէժ ևս Ղանձախ

Այս քաղաք զուարճալի համօրէն Ատրըմիատականի ' որ թեպէտ նուազեալ է այժմ յառաջն շքոյ բազմամարդու թեան և բազմա վաճառութեան սակայն տակաւին է մի յերևելեք սղաքայն Պարսից: Շարտին յամի հազար վեց հարիւր եօթանասուն և չորս երկրորդ դնէ զ'ա 'ի մէջ քաղաքայն Պարսից. և ճիզ վիժ ոմն հաւատար կայսւցանէ մեծութեան

ձեռով

Հոռովմայ : Բնակիչք սորա ըստ մեծի մասին
 են սպիտակագէտք , գեղեցկատեսիլք և ժրու-
 ջանք 'ի գործս և 'իշահս , յորոց բազում ան-
 ուանի անձինք ելին յազգէ Տաճկաց . բայց դէտ
 երկուս ստակասութիւնս 'ի բարս նոցա՝ մեծա-
 մրտութիւն և անհաւատարմութիւն : Բուն
 բնակիչք են Պարսիկք և այլ սահմանակից
 ազգք : Գտանին և յազդէս մերմէ իբրև քա-
 ռասուն տունք հանդերձ առանձին եկեղեցեաւ ,
 որք յառաջագոյն էին բազումք և փարթամք և
 անուանի վաճառականք : Բազում տունք Հայոց ,
 աւէ Սառգինիէ , բնակեալք յայս քաղաք՝ շա-
 հին մեծասպէս 'ի յառևտրութենէ , յորում քաջ
 են առաւել քան զՊարսիկս : Բաց 'ի բնիկ բը-
 շակչաց քաղաքիս՝ հանապազորդեան երթեալե-
 կութիւն է 'ի սմա բազմութեան վաճառակա-
 նաց յայլ և այլ . սահմանաց և յայլ և այլ ազ-
 գաց լսիցի :

Ուրֆայ :

Սայրաքաղաք նահանգիս բերդաւոր ,
 անուանի , սարսպապատ 'ի սպիտակագոյն որ-
 ձաքար վիմաց : Բնակիչք սորա արք կորովիք
 տունք իբր տասն երկու հազար , յորոց իբր
 երկու հազար են տունք Հայոց , իսկ Ֆուսայեալքն՝
 Տաճկաց : Գտանին և լսորիք սակաւք : Բազ-
 մութիւն արուեստաւորաց են 'ի սմա յազգէս
 Հայոց մանաւանդ քարակոփք , ճարտարապետք
 և կտաւագործք առաւել քան չորս հարիւր
 թէզկեաս : Աւել Ուրֆա վաճառանոցս , հրապա-
 րակս :

քակա, բաշանիս և աղբիւրս, որոց սպասուա-
 կան ջուրք գան արտաբուստ ՚ի կրկին տեղեաց .
 Առաջինն՝ կոչի Վերուղ սույն, որ ՚ի նախնի
 ժամանակաց անտի բերիալ է ՚ի հեռուստ բա-
 զում աշխատանօք ընդ ստորերկրեայ քարաշէն
 խողովակս . միւսն՝ Ղօսաղ սույն, որ յանցեալ
 դարու բերաւ ՚ի մօտաւորագոյն վայրէ քան
 զսառջինն ընդ երկրեայ ճանապարհաւ ՚ի ձեռն
 Ստեփաննոս երևելի ճարտարապետի ուրումն .
 Սի միայն եկեղեցի է այժմ ՚ի ձեռս ազգիս
 ձայոց անուանեալ Աստուածածին, պան-
 ծալի ՚ի մէջ համարէն Քրիստոնէից ՚ի նախնի
 ժամանակաց անտի, զոր ասեն լինել առաջին
 եկեղեցի Քրիստոնէից կառուցեալ Աբգարու
 թագաւորին ձայոց, որ յառաջ քան զամենայն
 թագաւորս աշխարհի հաւատաց ՚ի Քրիստոս
 Այս եկեղեցի ունէր, ասեն, եօթն քարաշէն
 գմբէթս, այլ Անանունն՝ որդի Աբգարու, որ
 յետ մահու հօրն եբաց զգրունս մեհենից .
 կործանեաց զվեցն և մնաց մինն միայն մնչլ
 ցայսօր:

Երկնայ 'ի Դն' Եկեղեցի

Այլնկայ է քաղաք երևելի հեռի յԱրգի-
 ուումայ երկց աւուրց ճանապարհաւ յարևելս
 հարաւոյ կառուցեալ ՚ի դաշտավայրի առ վտա-
 կանն որ ՚ի հնումն կոչէր Պայլ գետ և ոչ այն-
 չափ ինչ հեռի խառնի յԵփրատ: Պատեալ է
 պարսպաւ, զոր յառաջ քան զվերջին երկրա-
 շարժութիւնն նորոգեաց Աւայ Ատտին փաշայն,

որ էր քայքայեալ յոյժ : Տարածութիւն քաղաքիս է ընդարձակ . բայց բնակիչք ընտանեմատութեան նորա սակաւք իբր ութ հազար տունք :

Ստիպյալատակեալ երկրաշարժութիւնն դիպաւ յավին հազար եօթն հարիւր ութսուն և չորս ՚ի վերջնում աւուր յու լիսի յաւուրս Սուլդան շամլի . երկրաշարժութիւն սաստիկ յոյժ և զօրաւոր , որով մեծ մասն քաղաքին հանդերձ բնա՛ջօք եղև խորասոյղ : Ի ութ հազար տանց առտի՛ հազիւ մնացին հինգ կամ վեց հարիւր տունք : Եւ մի ընկալալ գիւղօրէք առ հասարակ հանդերձ բնա՛ջօք իւրեանց անհետ եղեն : Սերձ ՚ի մերձեկայ քաղաք՝ շուրջանակի են լերինք գեղեցիկք և ջրաբուղիք , որք սկզբնաւորեն զլեռնն Վոհանում այն է՝ Սեպուհ : Ի վերայ նոյն լերանց աստ և անդ են մենաստանք ՚ի զուարճալի տեղիս , զոր , ասեն բնակիչք , թէ նախ քան զլուսաւորութիւն մերձանն բազմութեան կոոց , որ կային յայսմ սոյմանի՛ այն ամենայն էին մեհեանք և սպա՛փոխեցան ՚ի մենաստան : Յատաճագոյն , որպէս ասեն . քսան և չորս մենաստանք կային անդէն , յորոց զբազումս ՚ի սրբոյն Լուսաւորչէն հաստատեալ աւե՛ . բայց յանշա՛եք ժամանակաց՝ սակաւք մնացին ՚ի նոցանէ :

Խոր Արեւիկ


Վերակ հնչակաւոր մեծի հին քաղաքի կրկեցեալ Լորտոշատ հե՛նի՛ մերկանս իբրև
2՛
մի

միօրեայ ընդ հարաւակողմն նորա, հեռի յԱջ-
 միածնէ ութ ժամաւ առ հիւսիսային գետե-
 ղերբ Երասխայ կամ 'ի ձախմէ նորա հանդէպ
 Ահոռի գեղջ: Չիք 'ի սմա բնակութիւն ինչ,
 այլ միայն 'ի տեղիս տեղիս երևին հատուածք
 պարսպաց նախնի քաղաքին, պէսպէս բուրգք և
 գաղտնի ճանապարհք և այլն: Անդ է քարաշէն
 եկեղեցի գմբէթաւոր յանուն սրբոյ Աւսա-
 ւորջի, յորում է խոր վիրայն, ուր եկաց սուրբ
 Աւսաւորիչն մեր հնգետասանամեայ ժամանակ,
 որոյ այժմեան խորութիւն է իբր հինգ գրկա-
 չափ: Աջանեն ընդ նմա իբրև ընդ քսան և հինգ
 աստիճանս, ուր կայ սեղան և անդ յամին եր-
 կիցս և երկցս մատուցանեն ոգտարագ:

Բաշէշ:


Ի հնումն ըստ մասին կոչէր՝ Մալնոյ ձոր,
 որ էր մի 'ի գաւառաց Աղձնեայ նահանգին:
 Բնակիչքն են ըստ մեծի մասին զանազան ցեղք
 Բրդաց, յորոց ցեղ ինչ կոչի Աշոտանի. բայց
 յայն գիւղօրէս՝ ուր գտանին յազգէս Հայոց՝
 խօսին առ հասարակ նաև Հայերէն և ո՛չ են
 վրանաբնակք և թափառականք, այլ ունին հաս-
 տատ բնակութիւն: Յառաջագոյն բազմութիւն
 կային յազգէս Հայոց յայս գաւառ, այլ սակս
 պէսպէս հարստահարութեանց ցրուեալ այժմ
 սակաւ մնացին: Եղու նոցա ծանր և տարբեր
 յյժ յայլ գաւառական լեզուաց Հայոց: Աւել
 բաղում վտակս, որք խառնին 'ի Տիգրիս գետ:
 Օտ սորա քաջառողջ մանաւանդ 'ի սահմանս

Քաղաքին Ռադիչոյ : Ժանտախտ հազիւ երբէք
 հանդիպի, բայց լինի չարաչար յոյժ ու պէս սո-
 վորութիւն է այս ր սխտի սաստիկ զօքանալ ի
 տեղիս՝ ուր ոչ լինի ստէպ, Ռեբէ ազգս ազգս
 պտղոց ընտիրս և առատս մանաւանդ. ինծ որ,
 տանձ և ձիթենի: Եւ զայլ տեսակս պտղոց՝
 բերեն ի հարաւային գաւառաց այսինքն՝ ըն-
 թուղ, զնուռն, զկաղին, զչամիչ, զսեխ,
 զխաղող և այլն: Աւրի նաև հանքս դեղին, կար-
 միր, սոխտակ և սեաւ մարմարիոնեայց և որ-
 պէս ա են՝ են և հանք ոսկւոյ և արծաթոյ սակս
 քաղաքական պատճառաց անգործք:



Գլուխ ԴԵ

Շանօխու-լի-նէ* պատմաբանականք



Պէրխանդրոս !

Պերխանդրոս՝ մին յեօթն իմաստասիրաց՝
 էր արքայ կորն թացոց՝ որդի Ափսպեղայ: Սա-
 թեպէտ և զանուն էա՝ իմաստասիրիբլան ճար-
 տարութեան մտաց իւրոց և գիտնաւոր գրուա-
 ճոցն, զբո յորինեաց յու զղութիւն վարուց
 մարդկան, այլ անձամբ էր մտլի ստաւե լայկա
 ըմբռնեալ յախտ ցանկութեան և կատաղի բար-
 կութեան: Եւ էր առածն գողեղի, սանձեա՝
 զբարկութիւն, և ինքն էր անսանձ բռնաւոր
 անաւ

անագորոյն և խիստ ան հպաժակու. այնչափ աշտեղի իւրոցն, մինչ զի յեւանեւն ՚ի տանէկասկածէր անանց բազմութեան զինուորաց երկու առաջի ամբոխին և ակն ածէր նաև յերեսաց տկարաց և վատասրտաց: Յայս ամենայն հայեցեալ համարեցան ոմանք թէ իմաստասէր Պերիանդրոս այլ ոք իցէ որիչ ՚ի բանաւորէս կրնի թացւոց: Ի այց այլք պնդեն նոյն լինել բեթելով օրինակ զՍողոմոն, որ իմաստնագոյն էր քան զամենայն իմաստունս, այլ խտորեցաւ զինի ցանկութեան և այլն: Եւ յայտ իսկ է թէ իմաստութիւն մտաց ոչ ինչ օգտէ այնմ, որ ոչն դնէ ՚ի գործ զիմաստութիւն իւր և ոչ վարի բարոյական իմաստութեամբ. այսինքն կարգելով զգիտութիւնն ՚ի գործադրութիւնն ուղիղ վարուց:

Ագամեմոնէ

Ագամեմոնն, որ այն ինքն է հայրն Ագրեստեայ, էր թագաւոր Միկենայ և Արգիացոց, որ ընտրեցաւ զօրավար ՚ի Յունաց ընդդէմ Տրոլացոց: Եւ եղև ՚ի հասանել զօրուն Յունաց նաւուք Ալիս կամ Ալիդէ գաւառ Բիովաիոյ յորժամ հարցին զգիտ վասն յաջողութեան պատերազմի՝ եղև պատասխանի ՚ի պատգամախօսէն. թէ ոչ այլազգ յաջողի ձեզ՝ եթէ ոչ զոհեսցի Ագամեմոնայ զՍտուածուհւոյ Իփիդիինէ դուստրն Ագամեմոնի: Իսկ այս թեպէտ և յանհնարինս դժուարացաւ Ագամեմոնն այլ զն մի, շարժեսցէ ընդդէմ իւր

զբովանդակ Յոյնս, ակամայ կամօք միտքանե-
ցաւ ՚ի զոհել զգուսար իւր. և զի գիտէր թէ
մայր աղջկանն չ'թողու զնա՝ ետպատճառանս,
թէ կամիմ գուսար մեր ամուսնացուցանել
քաջին Աքիլէաց. և այնպիսի հնարիւք ետ բե-
րել զնա: Այլ իբրև այն ինչ ունէին զոհել զԱ-
փիւղինէ՝ Արտեմիս չ'Աստուածուհին գլծա-
ցաւ ՚ի նա, ասեն, և եղեալ ՚ի տեղի նորս
զեղն մի՝ յափշտակեաց զաղջիկն, և թեօք
հողմոց թռուցեալ տարաւ զնա յերկիրն Տաւ-
րիկայ (Խաււճ) և արար զնա քրմուհի մե-
հենին իւրոյ՝ որ անդ կայր:

Կ ա ղ ի ս ս

Կաղմոս էր որդի Ագենովոյ, ըստ նախ-
նեացն Եգիպտացի՝ և ինքն Փիւնիկեցի. որ և
թագաւորեաց ՚ի կողմանս Փիւնիկեցւոց յերկ-
րին Ասորուոց. և ապա անցեալ ՚ի Յունաստան՝
շինեաց զնորն թեբաս ՚ի Բիովտիա գաւառի և
անդ ետ զաթոռ իւր: Սա, ասեն, ստեղծ զա-
ռաջինն՝ զնշանագիրս Յունաց, բերեալ ընդ
իւր արկաբետս ինչ ՚ի Փիւնիկոյ՝ թուով տասն
և վեց, որովք առ ժամանակ մի վարեցան շեղ-
լէնք. և ապա այլք ևս յաւելին հետ զհետէ
քանի մի տառս Գործակից էր Կաղմոսի և
եղբայր նորս Փիւնիքս. այլ անուն Կաղմոսի
նշանաւոր եղև յոյժ: Կր սա, ասեն, առ ժամա-
նակօք Սովսեսի փոքր մի զկնի, և կամ ըստ
ովանց փոքր ինչ յառաջ:

ԱՔԵՍԻՉՅԱՍ ԻՆԽԱՆՆ ՍՊԱՆԿԱՅԱՅԷ

Ալաւանաւորի ՚ի պատերազմի Ագեւսիդայոս
 Ինխան Սպարտաւոց և խժգժական կտտանք
 տանջեալ յարքայէն Պարսից՝ ոչ յոգւոց հանէ,
 ոչ յողոք խոնարհի. մինչև երևիլ թէ տանջեալն
 ոչ Ագեւսիդայոս իցէ՝ այլ արձան ՚որա, վասն
 այսորիկ կարծիս ՚ի մտի եղեալ թշնամւոյն թէ
 գեղամարդկային ոմն իցէ՝ արձակէ յազատու
 թիւն. զի մի ՚ի զից զԲ ունիցի ՚ի կալանաւ

ՊՕՆՆ ՆԹԷԼԵՆՆ

Պօղոս Նմիլիոս գինչ և առնէր՝ եթէ շինու
 էաւս, եթէ խաղս և եթէ խրախճանս՝ յօրինէր
 զայն մեծագործութեամբ և կարի իմն զչու
 շաւորութեամբ: () արմանային Յոյնք թէ զի
 արդ միտնորա զբաղեալ ՚ի մեծամեծս՝ այդպէս
 ժրաջան էր ՚ի մանուհա: Առ որս առնէր պա
 տասխանի: Նյն արուեստ է քաջ կարգել ըղ
 պատերազմ և քաջ յարդարել զսեղան. զայն
 յաճարկութիւն թշնամեաց և զայս՝ ՚ի ճգել զսէր
 քաղաքակցաց:

ՍԷՆԷՏԱՅԷ

Սենեքայ փիլիսոփայն՝ այրն մեծիմաստ, որ
 յատաչարակն եղև՝ Ներոնի Ասյսեր, ՚ի նմին խոկ
 մարդախոշոր բռնաւորէ մահու գատեցաւ. որ
 սպառում մտօք զայս մարդասիրութիւն և եթ
 եցոյց

եցոյց առ մարտապետն իւր, զի ասաց. ընտրեալ
քեզ Սեներքա զսեփակ մահու, որով ըստ հա-
ճոյս քո սպանից զքեզ. և նա յանհնարս մտեալ
խնդրեաց. զի հասցին երակք նորա ՚ի բաղա-
նիս, և առ սակաւ սակաւ դիւրութեամբ
լուծցի ՚ի կենաց՝ խօսակից լինելով ընդ բա-
րեկամս իւր: Այլ իբրև արարին այնպէս, օտ-
սեալ նորա թէ տագնապ մահու կրէ ընդ եր-
կար՝ խնդրեաց և մահադեղ. այլ ոչ այնչափ ՚ի
զօրութենէ թունիցն՝ որչափ ՚ի հոսմանէ ա-
րեանն և ՚ի ջերմութենէ բաղանեաց հեղձա-
մըղձուկ լեալ և անշնչացեալ մեռաւ:

Արիւն Իշապոս

Ապեղէսի Վիացոյց անկեալ հիւանդա-
գին ՚ի յետին չքաւորութեան, որ յետին աս-
պըճականն է առաքինեաց, եմուտ ՚ի խուղ նո-
րա Արիւնի զայսս գրքոյկ ՚ի ձեռին, և ասէ.
Ապեղէս գամ ՚ի հարևանցի ՚ի տես քո, և վասն
այնր չճանիմ ինչ առ իս՝ բայց զայս գիրք. և ՚ի
խոնարհիւն գիրկս արկանել մահ՝ գաղտ սպրդե-
ցոյց ընդ սնարս նորա քսակ լի ոսկեով: Ազիտ
զայն անկտրծ աղախինն. և ՚ի զարմանալ նորա՝
ասէ Ապեղէս. մի՛ զարմանար. անտարակոյս
խաղ է այդ Արիւնի զայսսի:

Կէտոս՝ արքայ Ալեքսանդրոս

Կրետոս՝ արքայ Ալեքսանդրոս՝ ճոխացեալ
գան

գանձուք և մեծութեամբ քան զամենայն թա-
 գաւորս ի բոյժ ամանակի, համարէր զանձն հա-
 սեալ ի հասարեալ երջանկութիւն. այլ խըրա-
 տեցաւ ի Սողոմէ իմաստնոյ Աթենացւոյ չէրա-
 նել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցլախ-
 ծան, զոր և արդեամբք յանձին իւրում ետես-
 զի յետ այնչափ փառաւորութեան իւրոյ անար-
 գաբար ՚ի ձեռս մտանեալ թշամեաց իւրոց՝
 յերկաթի տապակ հանաւ ՚ի Կլարոսէ՝ պարտից
 Աբայէ կամ ըստ Խրեանացւոյն՝ յԱրտաշէսէ
 Պարթևէ՝ և այոց արքայէ. այլ ՚ի յիշելն հա-
 ռաչանօք զբան Սողոմի՝ եգիտ գթութիւն և
 արձակեցաւ ՚ի տանջանաց:

Երանի՛ թէ ամենայն մեծատունք և փա-
 ռաւորք աշխարհի կամ որք երջանկանան յան-
 ձինս իւրեանց՝ ՚ի միտ ածէին զորինակն Կրե-
 սոսի և սակպ ասէին ՚ի յաշողութեան զասա-
 ցեալն ՚ի Կրեսոսէ ՚ի ձախողութեան՝ աւալ
 փառացս անցաւորի:

Արեշէս

Սելեուս էր նկարիչ երևելի յաւուրս
 մեծին Աղեքսանդրի Սակեդոնացւոյ: Սա, ա-
 սեն, գերազանցեալ յիւրում արուեստի զա-
 մենեքումբք՝ որ յառաջ քան զնա էին, և ՚ի
 յեանոց իսկ սակաւք հասին ՚ի չափ նորա:
 Այնչափ անուանի եղեն նկարք սորա, մինչև
 պատուէր հրամանի ետ Աղեքսանդր, զի մի՛ այլ
 որ իշխեսցէ նկարել զպատկեր իւր՝ բայց յԱ-
 պեղէսէ, զի ՚ի ձեռն այնպիսւոյ պանծալի ար-
 ուես-

ուեստաւորի մնասցէ փառօք յիշատակ իւր յամ
 պագայտ թնօղ զայն զի նկարեաց նա և զեր-
 կուս պատկերս Ափրոդիտեայ քաջ ճարտարու-
 թեամբ, որոյ մեծ էր յարգ առ Հելլենացիս,
 որպէս և զպատկեր բարեկամին իւրոյ Անտի-
 կոնոսի միականւոյ՝ զմի կողմն նորա և եթցու-
 ցանելով առ առագաստել զթերութիւն կոյր
 ականն: Սկարեաց և զերիվար մի այնչափ բնա-
 կան կենդանագրութեամբ, մինչև ՚ի տեսանել
 զնա այլոց երիվարաց՝ խինջային. ուստի և ասի՝
 թէ ասացեալ իցէ երբեմն Ապելէս ճշգե-
 սանդր բնդ խաղս. երիվար քո առաւել իրա-
 գէտ է նկարուց քան զքեզ:

Պէտարիոս փաշէրէսէ

Պէտարիոս Փաղերէոս էր՝ մեծանուն
 Հռետոր և փիլիսոփոս ճեմական՝ աշակերտ
 թէոփրաստոսի յաւուրս Աղէքսանդրի Սակե-
 դոնացւոյ և Պտղոմէոսի առաջնոյ՝ արքային
 Ագիպտացւոց: Սա վասն զգոնութեան իւրոյ
 ընտրեցաւ իշխանապէտ Աթենացւոց ամս տասն
 և արար բազում բարեկարգութիւնս. վասն-
 որոյ և յանուն նորա կանգնեցին Աթենացիք ար-
 ճանս պղնձիս՝ թուով 560 իբր ըստ աւուրց
 տարւոյն. այլ զինի այսր փառաւորութեան՝
 մինչև և լցեալ էին այնչափ աւուրք՝ որչափ էր
 թիւ արձանացն՝ կործանեցին արք յաշաղկոտք
 զարձանս նորա. և զՓաղերէոս արտասահման
 արարին և նա գիմեալ անկաւ Ագիպտոս առ
 Պտղոմէոս: Սա եղև, ըստ ասելոյ ոմանց, յոր-

դորիչ Պողոսի վիղադեղիեայ շինել գըրա-
տուն մեծ Վճշեքսանդրիա և հաւաքել անդ-
ընտիր ընտիր մատեանս՝ ընդ որս և զՎստուա-
ծաշունչն Աբրայեցւոց տալ թարգմանել ՚ի
յունական բարբառ ՚ի ձեռն եօթանասուն և
երկու ծերոց: Գրեաց սա և պէսպէս պիտաւ-
նու թիւնս, յորոց մնացուած քինչ հոգտորականք
կան մինչև ցայսօր:

Կուինդոս Մատիոս Ալեւաշ

Կուինդոս Մատիոս՝ մականուանեալն Ալեւա-
շա՝ էր ազնուական ոմն շուովմայեցի՝ այր կորովի
և սրտեայ. որոյ տու ետլ հրաման ՚ի ծերակու-
տէն՝ միաբանեաց ընդ իւր զարս սրիկայս դա-
ւել զթշնամիս. և նախ՝ ինքնին առանձին գնաց
՚ի բանակն Պոստենայ արքայի, որ պաշարեալ
էր զշուովմայեցիս. եղեալ ՚ի մտի մեռանիլ
վասն հայրենեաց՝ միայն թէ մեռուցէ զթշնա-
մին հայրենեաց: Աւ զի ոչ ճանաչէր զՊոստե-
նաս, տեսեալ զդպրապէտն արքունի՝ համա-
րեցաւ թէ նա ինքն թագաւորն իցէ և ան-
դէն եհար և սատակեաց զնա: Աւ իբրև կա-
լան զնա և ածին առաջի թագաւորին, աներ-
կիւ զխոստովան եղև՝ թէ ես այս անուն շուով-
մայեցի եմ՝ թշնամի ձեր՝ եկեալ ՚ի սպանանել
զթշնամին մեր. և մի՛ կարծէք, աւէ, թէ ես
միայնակ յայս յօժարեցայ, զի եհն և այլք ՚ի
քաջաց՝ որք սովին օրինակա - պատրաստեալ կան
դնել զանձինս ՚ի մահ: Յայժամ հրաման ետ
Պոստենաս՝ բորբոքել խարոյկ. և ստիպէր ըզ-
Սո

Մոտիոս բացայայտագոյնս ՚ի յայտ ասեւ զշա-
 ւադրութիւն իւր և զընկերայն. ապա թէ ոչ
 ասէ, կենդանւոյն ՚ի հուր այրեսցիս: Ասկ
 Մոտիոս ձգեաց վաղվաղա՛ի զաջ բազուկ իւր
 ՚ի խարոյկ անդր, և ետ այրիւ չարաչար ՚ի բոց
 հրոյն. ես ինքնին վրէժ խնդրեսցից, ասէ, յա-
 ջոյ իմմէ, որ վրիպեցաւ ՚ի հարկանել զայլ ոք՝
 փոխան արքայիդ. և ցուցից՝ թէ ոչինչ ասն-
 ջանք կարէ աս արկանել յիս: Սքանչացեալ
 արքայի ընդ անպարտելի արիութիւն առնն՝
 հրաման ետ արձակել զնա յազատութիւն:
 Յայնժամ ապա և Մոտիոս փոխարէնս կամելով
 հատուցանել շնորհի նորա՝ պատմեաց անպա-
 տրուակի թէ երեք հարիւր կորովի երիտասարդք
 յիմում խորհրդի են՝ դաւել զանձն քո: Արոյ
 վասն զասի հարեալ Պոստենայ՝ յետս եկաց ՚ի
 պաշարմանէ և առեալ պատանդս՝ դարձաւ ՚ի
 տեղի իւր: Աստի Մոտիոս Ակեվոլա անուն առ-
 ասեն, որպէս թէ ասեկեան. զի «էսս յու-
 նարէն նշանակէ յաւ կամ ասէսն՝ իբր զի ան-
 պիտանացաւ աջ նորա և այնուհետև միայն
 ձախու ձեռամբն վարէր:

ԿԷԻՍՈՍ Ե ԱՆԵՔՍԱՆԴՐԻ

Աղիտոս՝ այր քաջ և իմաստուն՝ էր եղ-
 բայր Հեղզանիկեայ դայեկին Աղեքսանդրի
 Մակեդոնացւոյ և սիրելի յաչս նորա: Սա առ-
 Պարանիկ գետով տեսեալ զԱղեքսանդր գլխի-
 բաց կռուիլ վսհանաւ իւրով ծածկեաց ըզ-
 գլուխ նորա, և զձեռն Հռոսսակայ, որ ձգեալ
 էր

Եր 'ի հարկանել զԱղեքսանգր' սուսերա-
հար կտրեաց 'ի բաց: Եւ յայնմ հետէ առա-
ւել ևս յաւելաւ սէր Աղեքսանգրի 'ի վե-
րայ Աղեքսանի իբրև ազսաչի իւրոյ: Եւ եղև
զի 'ի կոշուհա ուրեք ընդ գինի մտեալ ընդ
արքայի' սկսաւ Աղեքսան գովել զգործս և
զպատերազմունս Փիլիպպոսի քան զԱղեքսան-
գրի և յորդորել զնա լինել նմանող հօր իւ-
րում: Բնդ որ ծանրացասումն լեալ արքայի'
Եհար զնա նիզակաւ, զոր ունէր մօտ առ իւր.
և անդէն սպտակեաց: Այլ յորժամ սթա-
փեցաւ 'ի գինւոյն, այնչափ ստրջացաւ Աղեք-
սանգր ընդ կորուստ այնպիսի առն' մինչև
կամէր նովին նիզակաւ հարկանել և զանձն
իւր, թէ չէր արգելեալ 'ի մերձակայից. և
ապա եռօրեայ անկաւ 'ի սուգ թախճագին'
փակեալ յառանձնութեան և եղեալ 'ի մտի
անձնամահ լինել սովու: Եւ թէպէտ բարե-
կամք արքայի միսթարել կամելով զնա՝ ասէին,
թէ իրաւամբք սպանաւ Աղեքսան, այլ նորա գի-
տելով զսուտ փաղաքշանս նոցա՝ առաւել ևս
'ի խոր խոցէր. այլ 'ի վախճանի առ փոքր մե-
ղիւրութիւն սրտի իւրոյ հրաման ետ մեծա-
հանդէս փառօք թաղել զԱղեքսան:

Ն Դ Ա Յ Ի Ն Ա Ն Դ .

Այսպամինոնդ էր ազնուական ոմն թեբա-
յեցի եբր էրեք հարիւր յիսուն ամօք յառաջ
քան զՔրիստոս, որդի Աողիւմենայ, այր զգօն
և արի, աշակերտեալ Փելլայոսի Ալիւթագո-
րաւ.

րականի և ծաղկեալ 'ի մէջ Հելլենացւոց՝ փիւ
 լիսոփայութեամբ, պերճախօսութեամբ և նու
 շագածութեամբ, մանաւանդ թէ և առա
 քինի քաղաքավարութեամբ, զի այնպէս ճշ
 մարտախօս էր, մինչև չառնոյր յանձն և ընդ
 կատակս ասել թէ սուտ Հուսկ յետոյ եղև
 զօրավար քաջ. եգիտ զհայրենիս իւր 'ի ծա
 ռայութեան, և 'ի մեռանիլն՝ եթող յազա
 տութեան: Սա զինի բազմապատիկ մրցանաց
 'ի միումնուագի մարտնչելոյ ընդ Վակեդե
 մոնացիս 'ի կողմանս Սանտենիոյ՝ կարելի էր
 խոցեցաւ 'ի ճակատու, և յորժամ բարձեալ
 'ի զօրականաց ածաւ 'ի բանակն կիսամեռ
 և հազիւ հազ կարէր բարբառիլ զայս մի ինչ
 և եթ խնդրեաց 'ի մերձակայից ասել նմա. թէ
նապազ կայր ՚ի մէջ իմ և հօր դորա, կասկած
այդպիսի արկանէ յիմ վերայ և նուազէ մա
սամբ իմն յասացելոցս զՏեղինակութիւն, զոր
պարտ էր ինձ ունել ՚ի ժողովի աստ, բայց
նչինչ ծածկեցից ՚ի ձէնձ . այո՛ մահ Ամիլիա
րայ

քայ եղև ինձ խնդարի . իբր զի թէ կեցեալ էր
 այլ աւելի՛ վաղու ևս էաք ձեռն ՚ի գործ-
 ընդ ձուովմայր իսկ յաղագս որդւոյն խոստո-
 վանիմ՝ թէ ատեամ զնա, և խորշիմ ՚ի նմանէ
 իբրև յոգւոյ կատաղութենէ, և ՚ի բոցոյ հը-
 գեհարկուէ պատերազմիս այսորիկ : Եւ ոչ
 միայն խրատեմ, զի ՚ի քաւել զցրումն գաշանց
 ՚ի ձեռս տացի ձուովմայեցւոց, որպէս և խնդ-
 րեն . այլ թէպէտ և չխնդրէին, խրատ տայի
 արտասահմանել զնա ՚ի ծագս ծովու և ջամա-
 քի . և այնչափ ՚ի հեռաւտան, որ այլ մի՛ ևս
 լսելի ընցի յունկն մեր անուն նորա, և մի՛
 խոսովեցէ մերձակայութիւն նորա զհանգիստ
 մերոյ ձասարակապետութեան : Յաւարտ խո-
 սիցս այս էն իմ կարծիք . հրամայեսցիք երիս
 ազգս հրեշտակութեանց . մին երթիցէ իսկ և
 իսկ ՚ի ձուովմ՝ հաճել զմիտս ծերակուտին .
 երկրորդն զգացուցէ Մնիբաղայ՝ ՚ի բաց առ-
 նել զգորն ՚ի Սագունտանէ, և աւանդել զքա-
 ղաքն ՚ի ձեռս ձուովմայեցւոց . երրորդին յանձն
 եղիցի տուժել Սագունտացւոց զմիասն, զոր
 կրեցին ընդ ամենայն ժամանակս պաշարման
 քաղաքին :

Մնիբաղ զնչչ՝ երկեալ, (Մուկա) շերինս, արեհա-
 բանէ առ զօրախնձ աշորինաի :

Իմ ընդ առաջ ելեալ զայսոր ընդ ձեզ
 մեծամեծ ևս վշտաց վտանգի՝ չխմանամ՝ ուս-
 տի՞ իցէ երկիւղդ, որ ընկճեցոյց զքաջալե-
 րութիւն ձեր միանգամայն : Վուրբ այն էք, որ
 ՚ի

'ի բազում ամաց հետէ զինուորեալք առ հարբ-
 իմով առ Աստուբալաւ և առ ինև՝ միշտ
 գտայք յաղթակա՛ք: Անցիք ընդ Աբերուհաս-
 տատեալ 'ի միտս զերծուցանել զաշխարհ ա-
 մենայն 'ի բռնաւորութենէ Զոռովմայեցւոյ ,
 և շիջուցանել զանուն իսկ այնպիսոյ ամ-
 բարտաւան ազգի . և յօյնժամ ոչ ուրուք 'ի
 ձէնջ թուեցաւ յաչս՝ ճանապարհորդութիւնն
 երկար , որպէս թէ անցանել ունիցիք յարև-
 մտից յարևելս . և այժմ որ շատ ճանապարհ
 հատիք , և ընդ լեռինս անցիք Պիրենեանս 'ի մէջ
 ամենի ազգաց , և անցիք ընդ Զոռոզանոս , և
 նուաճեցիք զբուռն ալիս սրբն թաց գետոյս՝ ակն
 յանդիման բնութարաց Պաղղիացւոյ՝ զբրա-
 ջան հակառակելոց աալ մեզ անցս . և որ
 հանդերձեալ էք արդ ոտն դնել Ալպեայ լե-
 րինս , յորոյ 'ի թիկունս կոչս մասն է Վատլոյ :
 գտանիք ոգեսպառ . և սրտաթափ : Ասոյ զինչ
 համարիցիք դուք զԱլպեայ լեռինս . կարծի-
 ցէք թէ բարձր ինչ իցեն քան զբարձրաբերձ
 լեռինս : Եւ թէ բարձր ևս իցեն քան զՊի-
 րենեանս , յայտ է թէ չեն լեռինք՝ որոյ ծագ
 հասանիցէ յերկինս , ընդ որս անցանել ան-
 հնար իցէ մարդկանն Յայանի իմս է թէ լեռինք
 Ալպեայ են բնակաւորք և մշակեալք , և կե-
 րակրեն զմարդ և զանասուն , Վեսպանք իսկ
 Պաղղիացւոյ՝ զորս ակն յանդիման տեսանէք .
 յայտ է թէ չունէին թեւս յանցանելն ընդ
 այնս 'ի գալ առ ձեզ : Այլ և նախնիք իսկ
 Պաղղիացւոյ՝ յառաջ քան զբնականալն Վատա-
 վա՝ յերկիր՝ որ օտար էր նոցա , բազում ան-
 դամ անցին ընդ այնս աներկեան՝ անհամար
 բազմութեամբ կանանց և տղայոց , որովք

Մինչևիտս՝ ձանաչէ Ի-ր Վրիդանս և չափով Դաւան
նալ 'ի հնազանդութեն իշխանագետին՝ Խօսի աշուղտս

Ի ուեալ է իմ բազում անգամ, թէ առա-
ջին և ընթացիկ աստիճանն արդեանց է գլխել
ընտրութիւնն առնել բարեոյն ինքնին, առանց
պէտս ունելոյ այլում խորհուրդ հարցանելոյ.
Երկրորդն է՝ ընդունակ լինել անաւելոյ և կա-
տարելոյ զքաջ ազդարարութիւնս՝ զոր ըն-
դունի ոք յայլոց: Եւսկ որ ոչ գիտէ ոչ հրա-
մայել և ոչ հնազանդիլ, առ անարգս և ար-
համարհս է համարեալ: Արդ՝ քանզի բընու-
թիւնն ոչ ներէ մեզ ձգիլ յառաջին սար-
ժանս, ջանասցուք արժանանալ գէթ երկրոր-
դին, և մինչև հասեալ է մեր 'ի գիտութիւն
հրամայելոյ, ժրասցուք հնազանդիլ այնմ՝ որ
քան զմեզ խոհանարացն իցէ: Օն եկայք
Երթիցուք միանալ ընդ Փաբիոսի, և տանիլ
զորոշս մեր առաջի խորանի նորաւ Այս նո-
ւագ է միայն՝ յոր կամ է ինձ դեռ հրամա-
յել ձեզ երթալ ներքոյ արկանել զմեզ հըրա-
մանաց նորա, և ընծայել նմա միաբան զմեր
անհնաժուութիւն և զհնազանդութիւն՝ զոր
պարտիմք նմա: Եողջունել ինձ զնա՝ հայր
կարդալով, անուն՝ որում արժանի՝ է նա վասն
իշխանութեան իւրոյ, և վասն երախտեաց՝ զոր
արդ իսկ ընկալաք 'ի նմանէ, և դուք ևս՝ ոչ
զորանք, որջունեալք որպէս ձեր սլաշա-
պանս զայնտակ՝ որոց զէնք և քաջութիւնն
ՎԸ-

Վրկեցին զձեզ այսօր թե յայսմ աւուր չ'ուշ
նիմք այլ պարծանք, արծանասցուք գէթ եւ
բախտագիտութեան պարծանաց:

Սագեսն էլ զէջերասութիւն կամայնեացոց է

Մէջն ազատութիւնն՝ զոր ջանացայք ՚ի
ձեռս բերել: Ի քաղաքամիջի, ՚ի լոյս տուրն-
ջեան, ձեռն ակն յանդիման ծանրաբեռնի շրջ-
թայիւք և վարի ՚ի մահ մի ՚ի ձերոց աւագա-
մեծար քաղաքացոց: () Ինչ քան զայս բըռ-
նագոյն լինէր ՚ի կապուտ, ի թէ էր առեալ բռնի
ձողա երթայք ընդ առաջ լ'նիբաղայ, զար-
դարեցէք զքաղաքէ, տոնախմբեցէք զլր մտից
նորա, ՚ի տեսանել զյաղթանակ նորուն ՚ի
վերայ մից ՚ի ձերոց քաղաքացոց:

Բն Տարեա, Օրբեւեհի օտառ թան շիւն թ
«ի» ե-ր շո-րն, շո-րն էր շնտ հանդերձի-:

Ուղ հետե յետ կորուսանելոյ իմոյ ըզ
հայրեջնս, զիմ ազգայ'նս և զբարեկամս, յետ
ուպանանելոյ ձեռօք իմոյք զիմ կին և զորդիս,
առ զերծուցանելոյ զնոսա յանարծան լլկա-
նաց՝ որ մնայր նոցա. որովհետե ոչ կարե՞մ
մխիթարիլ գէթ ցաւագին մխիթարութեամբս
մեռանելոյ զմահ զիմոց քաղաքակցաց՝ զորս ու-
նիմ առտանոր առաջի աչաց, հասցէ ինձ յողնու-
թիւն՝ պնձին իմոյ քաջութիւն և զերծուցե-
ղիս

զիս 'ի թշուառ կենաց աստի: որում այլ ոչ
կարեմ հանդուրժել

Ուշտիս Խորհուրդ Լեւոսի՝ հի-պոստի Զաւակայ

Որպէս վերագաս են իշխանաւորք քան
զԷրուն/աւ և ծերունիք քան զհասարակ քաղա-
քացիս: նոյնպէս պարտին սոքա տալ նոցա օրի-
նակ, յորժամ բանք լինին 'ի թիկունս հասա-
նելոյ հայրենեաց, և ըստանձնել յիւրեանս
զբեռինս ծանուես և դժուարակիրս: Կամիցիք
գտանել 'ի սորադասս հլու-թիւն և հնազան-
դութիւն 'ի հարկատուութիւնս և յօժանդա-
կութիւնս, դուք և ձերայինք լէրձեք առաջինք 'ի
հանգանակել Վոքրկանց թեթեաբեռնին ծախք:
յորժամ տեսանեն թէ գլխաւորք առատաձեռ-
նեն աւելի քան զպարտն լծպա՝ եթէ կամք են
մեզ, թէ յողովրդեան Զաւակականի իցեն
նաւատորմիդք քաջ պատրաստականք, և զի
առանձնաւորք մտադիւր մատակարարեացեն
թիաւարս, սկիզբն արասցուք մեք ծերունիքս
տալ մեզէն նախ առաջին Տարցձեք առ վաղիւ-
'ի հասարակաց գանձատուն զամենայն ոսկի և
զարծաթ, զամենայն զաղինձ տղաւոր՝ դոր ու-
նիմք: պահեալ միայն զմատանիս 'ի սէտս մեր
և կանանց և որդւոյ մերոյ և զսրտաձե զարդս:
գոր կրին մեր մանկունք 'ի տղայական հասա-
կի: Այք 'ի մնջ կանայս ունիցին և դստերս:
չարող իցեն ունիլ առ իւրեանս ունկի մի ոս-
կւոյ 'ի զարդ միոյ միոյ 'ի նոցանէ: Արքեղենն
'ի գահակաւսր իշխանաւորութիւնս, կալցին

ան իւրեանս զկազմած երիվարաց իւրեանց
 և զարծաթ պիտանի վասն աղանոցի և բաժա-
 կի, որք ՚ի գործ արկանեն ՚ի սրբազան պաշ-
 տամունս կրօնիս Այլ ծերունիք կալլին առ
 իւրեանս միայն լիար մի արծաթոյ, և հինգ
 հազար կոտորակս տալաւոր պղնձոյ ըստ տանց:
 Օր ինչ այլ ստացեալ ունիմք՝ ոսկի, արծաթ և
 պղնձի դրամ, դիցուք ՚ի ձեռս եռապետաց
 կամ իշխանաւորաց արկեղ հասարակաց, և
 և զյս արասցուք առանց ինչ վճռի ծերա-
 կուտին, որպէս զի այս կամաւոր մուտ ՚ի
 հանգանակութիւն, և գովելի փոյթ ծառայու-
 թեան հայրենեաց՝ լիցի խթան պատուոյ, նախ
 ասպետաց, և ապա՝ ամենայն քաղաքացւոց, և
 ազգեացէ յիւրաքանչիւրն հաւասար նախան-
 ձախնդրութիւն վասն հասարակաց օգտի:

Այս է մի միայն հնար, զոր գտաք իշխանա-
 կից իմ և ես, յետ քննելոյ զլրոշութիւնս ա-
 մենայն մտադրութեամբ: Արժայք տեարք,
 և օգնականութեամբ դիցն սկի՛զն արարէք
 կատարումն տալոյ մերումս խորհրդոյ թէ
 ապրեցուցանեմք զհասարակապետութիւնն, ապ-
 րեցուցանեմք և զմեր առանձնական ինչս. բայց
 թէ մատնեմք զդուր հասարակաց, զուր
 է մեզ ապահովել. զներս:

Ձեռագրիս՝ ինչ Զուսվնայցի՝ ամաչեցուցանէ զսրբե-
 իւր շիրիւնահոս շխարհիշեալն ՚ի ծառայութենէ իւրեւ

Այնչմնա՛ առ վայր մի. չիւքո մատուցեալ
 առ իս՝ թող գիտացից. առ թշնամի՞ արդեօք
 դի-

դիմեալ հասի, թէ առ որդի՝ գերի՞ իցեմ՝ ի
բանակիդ քու մ, եթէ մայր Յայս վայր ճրգե-
ցին զիս երկարութիւն կենաց և պատաւու-
թիւն դժուարին, զի զքեզ վտարանդի տեսից,
նոյն և թշնամի։ Ա՛բբ իշխեցեր աւար հար-
կանել զերկիր, որ ծնաւն զքեզ և սնոցս
թուկտո ոխերիմ մտք հասեր այս և սպառ-
նալեօք, այլ ՚ի մտանելն քո ՚ի սահման երկ-
րիս՝ ոչ թուլացաւ սրամտութիւն քու։ Օխարդ
՚ի նշմարել քո զձուովմ ՚ի բացուստ՝ չեղև
քեզ յուշ զի ընդ պարսպօքս կան քո տուն, և
թերտիք առանին, մայր և կին և որդիք։
Արեմն թէ չէր իմ զքեզ ծեալ՝ ձուովմ ոչ
վտանգեր ՚ի մարտէս. ուրեմն եթէ չէր իմ
որդի՝ ազատ մեռանէի յազատ հայրենիս։

Բանասիրտութիւն կասելի՞նայի առ Դաւանիցս

Անչև ցերթ իցէ քաջիկ և մեծասիրտ
քաղաքացւոցդ հանդուրժել այսպիսեաց անար-
գութեանց։ Ա՛չ լաւ ևս իցէ մեռանիլ քա-
ջութեամբ, քան խաղալիկ լինել գոռոզու-
թեան ձերոց հաւասարից և թշուառ կեանս
վարել նախատանօք՝ ՚ի կորուսանել զայն
հուսկ ուրեմն տանջանօք։ Բայց արդ յանուն
ամենայն դից՝ անվրէպ առաջի կայ մեզ բա-
րեբարտագոյն վիճակ։ Ա մե՛ր ձեռս է յաղ-
թութիւն։ Ա՛ մեր առոյգ հարակ, և ան-
վեհեր համարձակութիւն յորին հա՛յառակն՝
ընդ որս ընդհարկանիլ ունիմք, տկարացեալ
են յամաց. և առ գրգանաց առհասարակ
կըթու-

կթուցեալք : Եւստ է սկիզբն առնել, այլ,
 ամենայն իւրովի գիւրեացի : Կայցէ՞ ինչ յոր-
 դոր քաջալէրութեան ձերոյ զբազոյն քան
 զայս : Ա՞րք իցէ այր՝ եթէ գէթ անուանս
 անգամ իցէ արժանի, և եթէ ուրիցի զսիրտ
 առն, որ տոկայցէ՝ զի մեր հակառակորդք
 զեղցին ճոխութեամբք, շռայլիլ նոքօք յան-
 չախ՝ ՚ի հարթյատակել զլէրինս, և ՚ի քա-
 րակարկառ փակել զճովս՝ զի կանգնեացեն ՚ի
 վերայ մեծակառոյց շինուածս. և մեք չու-
 նիմք ընուլ զարեւորագոյն սէտս, զի տուն ՚ի
 տուն յարեացեն՝ յորինել իւրեանց հոյակաոյ
 ապարանս, և մեր չիայ իսկ խորշ ՚ի պատագա-
 րել զանձինս : Ղնեն նկարս և անդրին, և
 սպասս մեծագինս. քանդեն զոր արդ ևս յինե-
 ցին, և կանգնեն նորանոր շինուածս : Թուի
 թէ կամին ՚ի վեգ գալ ընդ իւրեանց ճոխու-
 թեան, և թէ ձեռն արկեալ իցեն ամենայն
 ճգամբ ՚ի չիք դարձուցանել զնա : Բայց և
 այնպէս ձեռնհաս են ըստ քմաց հաճել զամե-
 նայն զկամս իւրեանց. և մեք ՚ի տունս մեր
 չգտանեմք ինչ այլ, բայց թշուառութիւնս
 և արտաքոյ պարտատեարս՝ որք հալածեն զվճ.
 վիճակ եղերական առ այժմ, և ևս թշուառ և
 առաղական առ յարայց : Դի՞նչ այլ մնայ մեզ
 բայց կեանք վշտագին և անյոյս : Զանգա զար-
 թուածիք զոգիս ձեր և խրախուսեալիք : Լու-
 սիկ ազատութիւնն անձկալի՝ որ ձեր առաջի
 կայ, ընդ նմին և ճոխութիւն, և վառք և պա-
 տիւ՝ վարձք սրանձալիք յալթութեան : Զանայ
 ՚ի՞նչ իցէ բաղդի՝ առաջի առնել ձեզ մեծ և սհա-
 տուցու մն : Եթէ՞ հայք աստանոր յիմ բանախօսու-
 թիւն : Սին իսկ իրք, պարագայք, վտանգք

յորս մտիք, չքաւորութիւնն՝ որում տանիք և
մեծամեծ աւարաութիւնք՝ զորս առմատու
ցանէ պատերազմ, խթան են՝ ազգեւ ՚ի սիրտս
ձեր: Պատճիք յիս զորագլուխ ոք, կամ զօրա-
կան, որպէս զհարդ հաճոյ իցէ ձեզ: Սար-
մին իմե՛ս ոգի և անձն՝ գլխովին ձեզ է նուիր
րական: Այ յետ բազմաց ինչ աւուրց՝ որպէս
յուսամ, արծանացեալ շիւպատոսութեան,
կատարեցից ընդ ձեզ զամենայն զոր և խօսե-
ցայ, միայն թէ ոչ գտայց վրէպ յակնկալու-
թենէ իմմէ զձէնջ, և դուք ոչ նախամեծար
ընտրիցէք զծառայութիւն քան զինքնակալու-
թիւն:

Սէրձին բան: Անասնիտի, Ռնչ Ռանէր 'ե Գերէն
Կլէպարայ:

Այլ յինէն կողմանէ, ասէ, մի՛ լար զիմ
այժմեան աղէտս, այլ լէր ինձ խնդակից վասն
ամենայն բարեաց՝ յորս վայելեցի: Կեցի առ-
մարդիկ մեծ և հզօր: Եթէ այժօր ընկճիմ ես՝
իմ պարտասութիւն չէ ինչ նախատադիր:
Չուովմայեցի գոլով՝ յայմէ Չուովմայեցւոյ
պարտեցայ:

Կլէպարայ գնայ Խոսուցանել նսէրս 'ե վերայ շեր-
ժ Անասնիտի:

Ո՛վ սիրելիդ իմ Անտոնիէ, վայրիկ մե
յառաջ թաղեցի զքեզ՝ դեռ ազատաձեռն,
այժմ

Երբ մոռնա զայգողսդ՝ կտտարեմ՝ գերեալ ան-
 ձամբ և ՚ի պահանորդաց պահպանեալ, զի մի՛
 ցողք և ՚ի կոծ աղճատեցից զստրկացեալ զայս
 մարմին՝ որ պահի առ ՚ի սովաւ յաղթանա-
 կել ՚ի քո վերայ: Այլում պատուոյ կամ զոհի
 դամբանականի մի՛ ակն ունիցիս. այլ՝ այսօրեկ
 վերջին են քեզ. ՚ի բաց տանին զՎղէօպատրաւ
 () մեզ առ կենդանութեամբ ոչինչ մեկնեաց
 ՚ի միմեանց, իսկ ՚ի մահուան վտանգիմք ասան
 փոխանակել ընդ միմեանս զտեղիս. զի դու
 Զարմայեցիդ՝ աստ թաղեսցիս, իսկ ես տա-
 ռապեալս՝ անդ յԱտալիա, այսուիկ և եթի
 եղեալ քեզ Վտեղակից:

Բայց թէ զորաւորք ոմանք իցեն և կարողք՝
 աստանոր վայրացս Աստուածք՝ (զի մեքն ըզ-
 մեզ մատնեցին) մի՛ թողուր լքանել կենդա-
 նի զքոյդ լծակից. և մի՛ ներեսցես իմում ան-
 ձին ՚ի քո վերայ յաղթանակել. այլ զիս աստ
 ընդ քեզ ամիոփեսջիր, անտ ընդ քեզ թաղեալ.
 զի ինձ ՚ի բիւրուցս չարեաց՝ ոչինչ այնպէս
 ծանր կամ դժնդակ, քան զսուղ զայս ժամա-
 նակ՝ զոր առանց քո կեցի:

Զաւասայեալ՝ յանդիմանէն զարացս-լի-ն նախա-
 բայն Զայս:

Օ ՚ի՞ առնիցէք զսուրբ կտակարանսդ,
 և կամ յո՞ տանիցէք զսպաս տէրունեան սեղա-
 նոյն. մոռանայցէք արդեօք զՏոգևոր օրհնու-
 թիւնսդ, և կամ լռեալ դատարիցէք ՚ի մար-
 դարէական ձայնիցդ. կափուցէք զաչս յըն-
 թեց:

Թերցուածոց, և խցէք զականջս 'ի Լսելոյ մի՛
 թէ զմտացդ անմոռացութիւնն ո՛չ յիշէցէք: . . .
 Նոցա է սպառնացեալ հուրն անշէջ. ընդէր
 դուք ընդ նոսա այրեցեալ տոչորեցայք. նոցա
 պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պա-
 րարիցէք զմարմինս ձեր նմա 'ի կերակուրօ
 Կուարն արտաքին նոցա թանձրացեալ որահի,
 դուք լուսազգեստք ընդէր յուղարկեցայք ընդ
 նոսա 'ի նոյն խաւար: Նոքա 'ի վաղնջուց հետե-
 էին իսկ կուրացեալք, դուք զ'նի կուրացն
 կուրացարուք: . . . Եթէ գիտէիք և երևէր
 ձեզ յայտնի, սուգ առին երկինք 'ի վերայ
 ձերոց: Զրեշտակք 'ի վերուստ են ձեզ բար-
 կացեալք. և 'ի յերկրես մարտիրոսքն են ձեզ
 ցասուցեալք: . . . Վուք էիք սիր պարծսք առ-
 թշնամիան ճշմարտութեան, արդ դուք էք մեր
 նախատինք առ նոյն թշնամիա: Յյժմ վասն ձե-
 րոյ ճշմարիտ հաւատոյն և 'ի մեզ փոքր 'ի
 շատէ խնայէին. և արդ 'ի պատճառս ձեր և
 զմեզ անողորմ դատին: Ա՛չ միայն զանձանց
 դատաստան տալոց էք առաջի ահեղ ատենին
 Լստուծոյ. այլ և բազմաց ամենեցուն՝ որ 'ի
 ձեր պատճառս և զնոսա ևս չարչարեցեն:

Քան: Սաբինէան հանանց առ ծնօց: Իւրեանց և
 առ ար: :

Մենեքին դուք արեանատու էք, նուր-
 րակաս անուամբ փեսայի և աներոյ. հապա՛ մի՛
 շաղախէք զձեռս յայն արիւն, զոր անհնար է
 ձեզ

ձեզ հեղուլ առանց յանցաւորութեան : ՍԵ
 արկանէք ՚ի վերայ ձերոց ողորմելոց տղայոց
 որ կիսոցդ որդի են և կիսոցդ թոռն, զկեղտ
 անուն թէ ՚ի զարմէ են որդեսպանից : Եթէ
 ընդ դաշնդ, զոր կուեցիք մերով ամուսնու
 թեամբ, չէք հաճեալ ՚ի մեր վերայ եղիցի
 ձեր ցասումն, որ այսմ մահահրաւէր կուլ
 եմք պատճառ, և այսմ ճախող երկպառակու
 թեան, որ զինէ զձեզ միմեանց ընդդէմ. զ
 քաղցր է մեզ մահ ընդունել ՚ի ձեռաց ձերոց
 քան առանց ձեր ապրիլ որբութեամբ և
 այրութեամբ :

Ուրափես սպանանէ զսոյր եւր՝ շեօնեցեալն չնսլէան
 Գ.՝ ՚ի Կ.՝ բափսեանց :

՚ի դառնալ Ուրատիոսի պարառութեամբ
 շոսվմայեցոց՝ ըստանձնեալ զկողոպուտ
 երից պարտելոց թշնամեայն փառօք՝ քոյր նորա,
 որ խոսեցեալն էր կնութեան միում ՚ի Կ.
 րատիոսեանց անտի՝ եկն ել ընդ առաջ նորա
 առ դրանն Կապենայ : Եւ տեսեալ ՚ի վերայ
 ուսոց եղբօրն զաճղանն նկարէն ասղնեգոր
 ծեալ յիւրմէ, զոր պարգևեալն էր իւրում
 փեսայացուի, պատառեաց զհանդերձս իւր. ըս
 կ[զքն արար կոծել զիւրծս իւր, և հե
 ղուլ հոսանս արտասուաց, ողբալի ճշով զա
 նունն գուժեւով զիւրջ փեսայի. և խափ
 թշնամանեալ զեղբայր իւր՝ առէ զայրագին :
 , ՚ի Եզ Ե հաս յաղթանակել ամբարշտաց ամ
 , ՚ի արշտիդ, և սօ^րն և ս կատարես ցնծութեան.

,, զի բարձեր յինէն զի՞՞ փեայ՝ զողոյ իմոյ
 ,, զհատոր : Այ եղկելի դու և վառ արանց .
 ,, պարծի՛ս ևս ընդ յանցաւորութիւնդ , և
 ,, թաթաւեալ յարեան սիրելւոյդ իմոյ Վրա-
 ,, տիոսի , ղնչս ևս առնես իմոյ ցաւոյ՛ : Պա-
 տանին յաղթական ծանրացասու մն խոժոռեալ
 ընդ վայիւն և ընդ թշնամանս քեռն յայնմ հա-
 սարակաց ուրախութեան և ՚ի հանդիւի անդ
 իւրոյ յաղթութեան՝ բրդեալ ՚ի բարկու-
 թիւն , մսեաց զսուր իւր ՚ի մարմին նորա
 այսպիսի իմն կշտամբութեամբ : ,, Ե՛րթ քոյրդ
 ,, խորթաբարոյ , որ չ՛ յիշես զեղբարսդ և ըզ
 ,, քո հայրենիս . Ե՛րթ արդ . առ որ խանդա-
 ,, կաթդ ես , և այսպէս մոռցի՛ն ամենայն
 ,, ձուովմայեցիք՝ որք ողբայցեն զթշնամիս
 ,, ձուովմայ՛ :

Խոսակցութիւն Շիպիոնի ընդ Աննիբալայ

Տարցեալ Շիպիոնի ցԱննիբալ զվարդ
 թուի քեզ . զո՞ արժան իցէ համարել մեծ ՚ի
 գորագլուխս : Կարգեգոնային առէ . զմեծն
 Աղեքսանդր . զի սակաւոր Սակեգոնայու ուղբ
 ցրուեաց զանհամար զլրս . և տարաւ զիւր
 յաղթական գունդս մինչև ՚ի ծագս աշխարհի
 հեշտեալ , քան զճանապարհորդութիւն Լիոյ
 զքօսասիրութեան : Շիպիոն առէ . զո՞ դաես
 յետ Աղեքսանդրի : Աննիբալ առէ . զՊիւ-
 սոս , զի նախ առաջին ուսոյց մեզ զարուեստ
 քաջ բանակելոյ , գեղեցիկ տեղակալելոյ , և
 զբասս դասս գնդաց յիւրաքանչիւր տեղիս զե-
 տե

անդելոյ, մինչև փոփոխակի միմեանց ՚ի թիւ
 կունս հասանելոյ. և զի ոչ ումեք ՚ի մարդ
 կանէ երբէք յաջողեաց որպէս սմա շահիւ
 զսիրտս. և այս ձիրք էին նորա այնպէս կա-
 տարեալ՝ մինչև, թէպէտ և օտարոտի որ էր՝
 ազգք խտալիոյ վերադասէին զինքնակալու-
 թիւն նորա քան զձուովմայեցւոցն, որք ՚ի վաղ
 ժամանակաց հետէ նախապատիւ էին յերկրի օ
 կրկնեաց անդրէն Շիպիոն, կամէի գիտել
 ո՛ւմ ապցես զերրորդ տեղինս լննիբաղ ասէ.
 զայդ ինձ պահեմ անտարակոյս: լսէ Շիպիոն
 օ պտելով. իսկ զինչ ասէիք՝ թէ ինձ յաղթէիրք
 լննիբաղ ասէ. յայնժամ համարձակ վե-
 րադասէի զիս քան զլննիբաղսնդր, քան զՊիւ-
 ռոս, և քան զամենայն մեզ ծանուցեալ մե-
 ծամեծ զօրագլուխս աշխարհի:

Գեղեթի պատասխանի Շիպիոնի լննիբաղսն առ գես-
 րանն լննիբաղի:

Ինձ չեն բնաւ զարմանք, թէ չճանաչես
 զՇիպիոն, և զձուովմայեցիս առ հասարակ.
 որովհետև և ոչ զթագաւորի, որ առաքեացն
 զքեզ առ մեզ, ճանաչես զայժմեան վիճակե
 Եթէ ՚ի մտի եղեալ էր ձեր, թէ անտու-
 գու թիւն ելից առնէ զմզ դիւրամէտ ՚ի հաշ-
 տու թիւն, հարկ էր Տեօնն քու՛մ կալ մնալ ՚ի
 ստացու թեան Վիւսիմաքեայ, զի մի՛ խապան
 լիցի անցից մերոց ՚ի Քերսոն. կամ գալ մեզ
 ընդ ս.ո.աջ յիւլեւսպոնտոս՝ զի արգելէ զան-
 ցանել մեր յսիւս Բայց որովհետև թողացոց
 նա

նա մեզ զայդ՝ գովին որպէս թէ էարկ զանձն
 ընդ սանձիւ և ընդ Լճով: Եօղերձս՝ զոր առ
 իս ուղերձէ, զդարձ որդւոյ իմոյ անհնար է
 ինձ չ'ընդունել սրտառուչ կամօք: Բստ այլ
 իրաց՝ խնդրեմ՝ ի դից յայնպիսում լինել վի-
 ճակի, որ այդմ ամենայնի ոչ կարտացայց գէթ
 մի՛ լիցի սրտի իմոյ ակնարկել յայնս իբրև ի
 պիտանիս. և ակն ունիմ թէ ոչ էրբէք փոր-
 ձեացեն ինձ այ՛ք: Եթէ Լ'նտիոքոս մասնաւոր
 շնորհիւ պահանջէ յինէն շնորհապարտութիւն
 ինչ առանձնաւոր, ցուցից նմա թէ չեմ ապա-
 շնորհ. բայց որպէս այր հրապարակական՝ մի՛ ինչ
 ակն կալի յինէն, որպէս և ինձ՝ ոչ հասանէ
 ընդունիլ ինչ ի նմանէ: Թէ աւելի զայս ինչ
 կարող եմ առնել առ այժմ: տալ նմա որպէս
 բարի և հաւատարիմ բարեկամ՝ խրատ փրկ-
 կական: Լ'դա երթ և ասա նմա յինէն կող-
 մանէ. զի թէ հաւատայ յիս, ի բաց դիցէ ըն-
 զէնս. և մի՛ իւրիք հրաժարեայի ի սլայմանաց
 հաշտութեան, որք առաջի դնիցին նմա:

Մանչեստրէ քրտիւն Էր Կառնալ Ընդէ: Գառն
 շիացոց:

Չզարմանամ, ասէ, թէ Գաղղիացիք այս-
 պէս անէզանուն եղեն ի մէջ մեղի և կրնա-
 մարդի ժողովրդոցս Լ'սիոյ: Ա ի թխարութիւն
 նոցա և ոսկեգոյն հերք, որ իջանեն ցմ ջս. վա-
 հանք նոցա մեծ ամեծք, և սոււերք երկայնք.
 ևս և երգք, և գոռումն և գոչումն՝ զոր առ-
 նեն ի սկիզբն մարտի, անէզ շառաչիւն զի-
 նուց

հուլիսնոցա և վահանոց՝ այս ամենայն թող տե-
 հաբեկ ասնէ զանընտելաւ, այլ ոչ զձորովմացե-
 ցիսդ, որք այս քանիցս անգամ յաղթեցիք ազ-
 գիս։ Այն զի՝ դուք ձեզէն զչափ տուեալ գի-
 տեք թէ յետ թափելոյ Ղաղղիացւոց զիւրեանց
 առաջին բորբոք, մի միայն յամառ դիմակաւ
 լուծիւն թշնամեաց լքուցանէ զքաջալերու-
 թիւն նոցա, և թուլացուցանէ զգորութիւն
 մարմնոյ նոցա, որոց այսուհետև անկարացեալ
 տոկալ տապու արևու, աշխատութեանց, փո-
 շւոյ և ծարաւոյ՝ թօթախին՝ ի ձեռաց նոցա
 զէնք, և տեղի տան առ խոնջելոյ և ի նուա-
 զութենէ։ Այլ կարծէք, թէ այս այն առա-
 ջին Ղաղղիացիք իցեն բրտացեալք յաշխատու-
 թիւնս և ի միշտս վտանգաց և որոց բնաւոր
 վայրագութիւն ընդ զտեղի քաջալերութեանէ
 Յուսթութիւն երկրին՝ զոր կալան, քաղցրա-
 խառնութիւն օդոց՝ ուր շնչեն, փափկասիրու-
 թիւն և գրգանք ժողովորոց՝ յորս բնակին .
 իսպառ զնոսա տկարացուցին։ Օհ զոր ինչ ի
 տունկս է տեսանել, նոյն և առ մարդիկ լինի։
 Աճեցեալքն ի բուն յիւրեանց երկրի՝ պա-
 ճեն զամենայն զիւրեանց ոյժ և զօրութիւն .
 բայց որք փոխադրին յերկիր օտար՝ ի սուղ
 ժամանակի այլայլեալ յոռանան։ Աման այսու-
 րիկ իրաւամբք այս ժողովուրդք կոչին Ղաղ-
 զիական Յոյսք։ Այլ այլ ինչ են սոքա, բայց
 փոխադրեցիք Ղաղղիական զէնս զգեցեալք .
 և իմ այն է երկիւղ, գուցէ յաղթելն ձեր
 այսպիսի չարժանի թշնամեաց՝ ոչ լիցի ձեզ
 ի շատ պարծանս։

Տիպիան յարմարէ զԺուզուարէն գնալ գոհանալ շրեց
 շահն իւրոց ցաշխա-լեւանց ։

Տրիբունք ժողովրդեան , և դուք քանդա-
 քացիք . այս օր է՝ յորում յաղթեցի ես Անի-
 քաղայ , և կարգեդոնացուց Անիքիկէ : Այս-
 պիսի բարեբաւտիկ օր չէ՛ արժան անցուցանել
 ՚ի վէճս , ՚ի քննութիւնս և ՚ի փութելու
 Ասան այսորիկ երթամ ես վաղվաղակի ՚ի կա-
 պիտողիոն , խոստովան լինել մեծին Վիտի ,
 Շերայ , Աթենասայ և այլոց զից՝ բնակիւց
 յայնմ մեհենի և յամբոցի անդ և գոհանալ
 զնոցանէ , զի ՚ի սմին աուուր և յայլ բազումս՝
 ետուն ինձ միտս և կար ծառայելոյ յօգուտ
 և ՚ի պարծանս հասարակասեւտութեան : Ա-
 կայք զկնի իմ . ո՞ շուովմայեցիք , ամենեքին՝ ոյք
 ունիք պարապ և ոյք սիրէք զհայրենիս . և
 աղաչեցէք զդիքս : զի հաճեցին հանապազ ալ
 ձեզ զզօրագլուխս և զիշխանաւորս ինձ ի ըմա-
 նօղս : Մարթ է ինձ խօսիլ այսուիկ համար-
 ձակութեամբ , զի արդարև յեօթնուտասն
 ամենից մինչ ցծերութիւն , յոր հասեալս եմ
 դուք միշտ կանխեցուցիք քան զարժանն իմոյ
 հասակի՝ զձեր մեծարանս . և ես քան զձեր
 մեծարանս՝ զիմ ծարայութիւնս :

Երեծոցիչ Էստիբան : Մարիէշտի աւեր շրու :

Շնորհ ունիմ մեծապէս զդից անմահից
 յետ ձախողութեանս . զի չեկն յաղթական
 թշնամին յարձակիլ ՚ի վերայ մերումս բանակի
 ՚ի

Դէ ձերու միտ հապճեայ փախստի : Օհ անտարած
 կոչս երկիր զն՝ որ հալածեաց զձեզ ՚ի Ֆակա-
 աէ պատերազմի, վարէր զձեզ և ՚ի ձերոց վա-
 նաց : Քայց յորոյ իրաց իցէ երկիր զդ և սա-
 սանութիւնդ , և մ՛մոռացոյց ձեզ այդպէս ՚ի
 քուղ ժամանակի՝ թէ ո՞ էք դուքս, ո՞ են ձեր
 թշնամիք : Ա՛յ այնք են սոքա , զորս յանցեալ
 ամի ՚ի շահատակել ձերում՝ բազում անգամ
 հալածականս արարիք և յաղթեցիք նոցա , և
 զորս արդ իսկ զցայգ և զցերեկ աշխատ արա-
 լիք , և անդադար թեթևամտութեամբք պար-
 տասեցուցիք : Չօխեմ , թէ չէր արծան ինձ
 պահանջել ՚ի ձէնջ պահել ձեզ զպարծանս
 առաջնոց յաղթութեանց , որովք յաղթեցիք
 նոցա . շատ էր առնել ձեզ զերեկեան մար-
 տի հաւասարութիւն ՚ի մէջ ձեր և թշնամեաց :
 հաւասարութիւն՝ որ էր ձեզ ամօթ մեծ :
 Քայց ո՞ կարծէր , թէ ՚ի սերկեան աւուր
 առաւել ևս վաթարեալ զգենուք մեծ ևս
 անարգութիւն : Օհ՛նչ այդ փոփոխութիւն
 իցէ ՚ի պահու միոյ տունջեան և գիշերի :
 Կուազեաց ձեր թիւ կամ թէ առաւելն ձեր
 թշնամիք : Օարդարն ասեմ , ո՛չ թուի ինձ իս-
 սիլ ընդ իմ զորականս , և ո՛չ ընդ ճարտմայե-
 ցիս : Տեսանեմ զի նոյն են զէնք և նոյն զօ-
 րականք , այլ ո՛չ նոյն սրտայնդութիւն : Ըպա-
 քէն՝ թէ չէիք օտարացեալք անձամբ յանձնէ ,
 մի թէ տեսանէ ին կարբեդոնացիք զձեր փա-
 խոււտ , կարողանայի՞ն արդեօք բառնալ ՚ի
 ձէնջ զգրօշակս զմիոյ և եթ դասու , զմիոյ
 միայնոյ գնդի ձանար էր նոցա ցայս վայր պար-
 ծ՛լ , թէ կոտորեցին զլէգէոնս ճարտմայե-
 ցւոց , այլ դուք այսօր էտուք նոցա պարծանս :

Կստել թէ տեսաք Հռոմէացիցիս՝ որք դարձուա
ցին զթիկուհս առաջի իւրեանց:

Սփռնիւք՝ ին Սեփանայ՝ Կասար Լասրուբաւոյ՝
անհանի աւսար Սասնիւք՝ էշեանի՝ Սփռոց-
Լասնի:

Ինք, և քո քաջութիւն և բարեբաստու
թիւն տէր արարին զքեզ իմում օրհասի:
Բայց թէ արժան ինչ աղախնոյ ստրկի աղերս
երկիւղագին արկանել առաջի այնմ, յորոյ
թի ձեռս է իշխանութիւն կենաց նորա և մա-
հու, թէ հաճիցիս թողացուցանել ինձ, փա-
րեալ զԿնոքոքդ՝ և զյաղթական ձեռօքդ: Առ-
քեզ պաղատիմ, վասն արքունի փառացդ, որում
նուիրական անուան վայր մի յառաջ էս իսկ
էի ընդ քեզ բաժանորդ: Այսն՝ Կումիդացի
անուան, որ հասարակաց է՝ քեզ և Սիփակայ
և վասն դից՝ խնամակալուաց այսր արքունեաց,
յորում մաղթեմ լինել նոցա քաղցրահայեաց ի
քումդ եկաւորութեան, քան ի դաւագին
մեկնութեան առնս իմոյ աւտի: Օքեզ աղա-
չեմ շնորհել ինձ զայս միայն շնորհ, զի դու
լիցիս դատաւոր վիճակի քումդ աղախնոյ կա-
լանաւորի. չթողացուցեալ ինձ անկանիլ ընդ
գոռոզ և անագորուն տէրութեամբ ուրուք
Հռոմէացիցւոյ: Եթէ չէր իմ այլ պատճառ,
բայց այն՝ թէ կին իմ Սիփակայ շատ էր այդ
իշխանիդ՝ Սումիդացւոյ ծնելոյ յՄիլիկէ Իբ-
րև զիս՝ նախամեծար ընտրել քեզ զհաւա-
տարմութիւն առ իս, քան առ օտար ոք: Բայց
դի-

գիտես քաջ՝ զի կին Կարբեդոնացի և դուստր
 Լասորուբալայ՝ յի՞նչ իրաց երկնչի՛ ՚ի ճոռովմա-
 յեցւոց: Թէ՛ չէս կարող զերծուցանել զիս
 ՚ի նոցուն Տէրութենէ՛ այլով հնարիւ բայց
 եթէ մահուամբ՝ զայդ խնդրեմ որպէս մեծա-
 գոյն շնորհ, զոր հնար իցէ քեզ շնորհել ինձ:

Բան կիներունի մեծ շահարկաց և շահասաց օ

Ո՞վ իցէ մեծատուն, կամ զո՞ր արժան իցէ
 կոչել: Ինձ մեծատուն թուի այն, որում է
 ճոխութիւն բաւական յազնուական վայել
 կենաց, որ ոչ ինչ աւելի խնդրէ, ոչ իմիք
 փափաքէ, և ոչ ըրձանայ իմիք: Այնք քո ըզ-
 քեզ մեծատուն համարեացեն, և ոչ բանք
 մարդկան, և ոչ ստացուածք քո. մի՛ ինչ քեզ
 պակաս գրեացի, և մի՛ առաւելագունից ակն
 դնիցես: Եթէ իցեն քեզ ինչք բաւական և
 լցին պէտք քո, շատ է և մեծատուն ես.
 ապա եթէ առ աշխարհ ցանկութեան ընկից՝ ոչ
 ինչ ՚ի շահից խոտան համարես, և հանապա-
 զօր նենգես, պատրես, պահանջես, դաշինս
 կուես, կորդես և յափշտակես, եթէ զընկերոջ
 մերկես, եթէ զգանձան կողոպտես, թէ բա-
 րեկամացդ կտակի ակնկալէալ մնաս, այդ
 ամենայն ոչ մեծատուն՝ այլ կարօտելոյ նշա-
 նակք են: Սիրտ մարդոյ մեծատուն անուա-
 նեմք, և ոչ զարկեղս նորա. զի թէ և արկեղք
 լնեալ իցեն քո, այլ յորժամ զքեզ դատարկ
 տեսանեմ, ոչ ևս մեծատուն կոչելից զքեզ.
 Դովին, որչափ շատ իցէ առն իւրաքանչիւր,
 շա-

Եւս, Գուրգիւնի գուլի

չափի ճոխութեանն պայման : Ա՞յլ անմա,
 Լստուած . ոչ խմանան մարդիկ՝ եթէ որդէս
 չափաորութիւն գիտէ առաւելու զեկա-
 մուտս : Եւսի ոմն ՚ի կալուածոց իւրոց վեց-
 հարիւր դահեկանս . իսկ ես յիմոյն հարիւր :
 'Կմա՛ որ ոսկեճեղուն յարկս կանգնէ ՚ի գիւղս
 և յատակս կճեայս, նկարս, արձանագիրս, և
 որ կարասեօք ընու զտունն, և անբաւութեան
 զգետտուց փափաքող է, ոչ միայն աննայն
 ծախքն անհամեմատք են ըստ մտից կալուա-
 ծոցն, այլ և ընդ տոկոսիան : Իսկ յիմոց դոյզն
 մտից ՚ի բաց հանեալ զծախս փափաքանաց իմոց,
 տակաւին յաւելու : Եւրդ ո՞ յերկուցս մեծա-
 տուն իցէ որում պակասե՞ն, թէ որում սուա-
 ւելու : Ա՞յլ է՛ որ կարօտն իցէ և ո՞վ որ յըդ-
 փացեալ . այն, որոյ որչափ յորդեն ստացուածք
 զսւելին խնդրէ, թէ նա՛ որ իւրովքն լիա-
 ցեալ է : Ա՞յ թուով համարոյ, այլ ՚ի սեղա-
 նոյն և ՚ի հանդերձանացն սահմանի հարստու-
 թեանն չափ . չցանկալն՝ մեծութիւն է . չծա-
 խելն՝ եկամուտք են . բաւականութիւնն՝ մեծ-
 և հաւաստի ճոխութիւն է : Եւրայքէն եթէ
 քաջածանօթք իրաց իրաց՝ մեծագին համարեն
 զմարդս և զանդատանս, զ՛ ստացուածքն այն
 բնաւ ոչ ապականին, ապա քանի՞ առաւել
 համարեսցի առաքինութիւն՝ որ ոչ յափշտա-
 կի և ոչ յաղարտ վարի, ոչ նաւարեկութեամբ
 ծախի և ոչ հրկիզութեամբ, ոչ մրրկաց և ոչ
 ժամանակաց այլայլութեամբ ապականի, որովք
 որ միանգամ ճոխացանն՝ միայն նոքա եղեն
 մեծատունք, զի նոքա միայն ՚ի ձեռին ունին
 զպողաբէրսն և զյուսերժականսն . միայն նոքա
 շաղանան որովք ՚ի ձեռին ունին, զի այս

սեփական է հարստութեան : Եւստ համարին զոր ժառանգենն , փափաքեն և ոչ իմիք, անկարօտք են , և պակասի ինչ ոչ նոցա, և բնութիւնն ոչ ինդրեն : Այլ յանմտացն և յընչաբաղից, որոց կեղակարծ և ըստ դիպուածոյ միայն է ճոխութիւնն , և միշտ առաւելագունին ՚ի ինդիր ենն, ոչ որ է ՚ի նոցանէ՝ որ շատանայ ՚ի ստացեալն : () Նոսա ոչ միայն թախուրս կոչել արժան է ՚ի մեծութենէ և ՚ի ճոխութենէ, այլ մանաւանդ տնանկս և աղքատս :

Սուա Բ, թէ զԼագանսն լեւան պատիւ : զոր յասան շարիէցին նա ձգալուայցի :

Սեծ պատիւ է ինձ , զոր արաջարկէք ՚ի կողմանէ ժողովրդեանն ձողովայ. այլ չեմանամ թէ զհարդ հնար եղև արկանել նոցա զաջս յիմ վերայ , ՚ի գահակալել զիշխանութիւն այդպիսի : թնէ գոյ ինչ յիս արգոյ՝ այն են հանգամանք, վասն որոց արժան էր ՚ի բացառնել զիս յաթոռոյ , և չմտուել յայն. այն է՝ սէր հանգստեան , կեանք առանձնական գրլխովին պատողեալ յուսումն , յորդոր եռանդըն խաղաղասիրութեան , և կարի իմն բացադարձութիւն յամենայնէ, որ ունի զհոտ պատերազմի, կամ իրօք ինչ յայն հայի . իմ կեանք եղեն ընդ մարդկան , որք ընկերէին ինձ յուսումն տօնից ՚ի պաշտն դից, և ապա գործ էր նոցա մշակել զերկիր և արածել զխաչինս : Ստանգաւոր իմն է ամենայն փոփոխութիւն կե-

կենաց մարդկան . և որ ոչն բռնադատի ՚ի
 հարկէ , և չէ անգոհ զլուրմէ բախտէ՝ չէ
 ի մաստուն , թէ հրաժարի յլուրմէ քաղցր և
 խաղաղական վիճակէ , և բուռն հարկանէ այ-
 լում խոռովայնց և դառնալից վիճակի : Աս՝ ՚ի
 անտիլ Հոռովմայ յամենայնի զհետ պատերազ-
 մաց և յաղթութեանց , և յըլճանալ նորա մե-
 ծանալ և հրամայել այլոց՝ անխոհական իմն
 թուի խորհիլ արկանել ՚ի սիրտ Հոռովմայե-
 ցոց ոգի խաղաղութեան և ցատութեան , և ոչ
 յառաջ վարել զառաջնորդութիւն ժողովը-
 դեան , որում՝ որպէս թուի , առաւել վոյժ է
 զօրագլխի ուրումն զօրու , քան թագաւորի :

Առէրիս՝ յեա աշտարանաց Տարի-տնիսի Վերջնայ՝
 անկեալ ընդ իսկաճանօսի էք : Ընէ իսի Լատարիէ՝
 Խօսի այսպէս :

Ուրեմն չ'իցէ՞ հնար և՛ս և քաջափորձ առա-
 քինութեան լինել երբէք յալահոլի ՚ի ձերոց
 կասկածանաց : Աւ զեարդ զինէն՝ որ սխերիմ
 թշնամիս եմ թագաւորաց , հնար իցէ քեզ կար-
 ծիս ՚ի մտի դնել , թէ՛ ակն եղեալ իցեմ թա-
 գաւորական իշխանութեան : Ասկ զի՛նչ . թէ՛
 և ՚ի գղելի բնակէի և ՚ի կայխոռլինի պարտ
 էր ինձ զանգիտել , գուցէ առիթ լինիցիմ
 խոռվելոյ զիմ քաղաքացիս : Աստահութիւնն
 զոր ցայս վայր ցուցեալ է ձեր առ իս , այնպէս
 անհիմն իցէ մինչ առաւել ևս նախանձախորն
 դիր լինել ձեզ տեղոյ բնակութեան իմոյ .
 քան անձին իմոյ : Անխոռլերուք , ո՛ Հոռով-
 մս .

մայեցիք, զի տուն Աղերիոսի ոչ լիցի խոչ
 ձերումդ ազատութեան. մի ինչ երկնչիք ՚ի
 Ալեքայ. զի բարձրութիւնն՝ յոյր վերայ ար-
 կի ես հիմն շինուածոց՝ այլ ոչ լիցի ձեզ յեր-
 կիւղ. ֆոխադրեցից զիմ բնակութիւն ոչ միայն
 ՚ի տեղի տափարակ. այլև ՚ի ստորոտ լերին
 առ ՚ի կարող լինելոյ ձեզ ձերով տեսութեամբ
 տիրել յիմ վերայ, և ՚ի վերայ քաղաքացւոյս
 փեղակարծի և վտանգաւորի, և այնց թողա-
 ցուսցի կանգնել շինուած ՚ի վերայ լերինն Ալե-
 քայ, յորոց ՚ի ձեռս առաւել յապահովի ինչ
 ազատութիւն, քան ՚ի ձեռս Աղերիոսի:

Բան հրէշտանայ Անի-Քացւոց առ Սալէտանային
 Աշէսանդր Թ

Աթէ չափ մարմնոյ ըստ ցանկութեան սրբ-
 տիդ տուեալ էր քեզ դիցն՝ տիեզերք զքեզ
 ոչ տանէին. աջովդ զարեւելս, և զարեւմուտս
 ահեկաւդ ըմբռնէիր. և այնմ հասու լեալ,
 հետազօտէիր՝ ո՞ր արեգականն ծածկիցի ճա-
 ճանչ. այսպէս անհասից տենչաս: Յեւրոպեայ
 դիմես յԱսիա, և յԱսիոյ յԵւրոպէ անցա-
 նես. իսկ եթէ զմարդկան առհասարակնուա-
 ճեսցես ազն՝ ապա ընդ մայրիս և ընդ գետս
 և ընդ սառամանիս և ընդ ամեհի գազանս
 ճակատ յարդարեսցես: Աղէ՛ չ՛գիտիցես զի
 ծառք մեծամեծք յերկար ժամանակաւ աճեն,
 և ՚ի ժամու խլին, զի և առիւծ անգամ
 կուր լինի երբեմն հաւուց ֆոքունց. զի զեր-
 կաթ ծախէ ժանդ. չիք հաստատուն ինչ՝ ում
 և

և 'ի ակարէ չգուցէ վտանգ : Տի՞ կայ մեր
 և քո . զերկրաւ քով մեք ոչ քերեցար . և ոչ
 բնակիչք ընդ արձակ անտառաց կարասցեն ան-
 գիտանալ՝ ո՞րիցես և ուստի՞ եկեալ : Ա՛ջ ծա-
 ռայել ումեք կարեմք , և ոչ տիրել յօժա-
 միմք . և զի մի՛ անտեղեակ իցես Այլի-թացս
 ազգի , պարգևք տուեալ են մեզ 'ի դիցն՝
 լուծք եզանց և արօր , նեա և նիզակ և դաշ-
 խուրան : Սոքա են միջ սպասք և առ բարե-
 կամս և առ թշնամիս . բարեկամաց ընծա-
 յեմք արմտի՛ քրտամբք արջառոցն հայթհայ-
 թեսլ , դաշխուրանաւ ընդ նոսա դիցն նուի-
 րեմք գինի , և զնետ 'ի հեռուս , և 'ի մօ-
 տոյ զնիզակ արձակեմք՝ 'ի թշնամիս : Սոքօք
 զաղբս պատերազմօղս և զթագաւորս հզօրս
 նուաճեցար , և զԱսիա կոխան ոտից արարաք .
 և բայաւ մեզ ճանապարհ մինչև անդր յՅ-
 գիստոս , իսկ դու՝ որ ստնծասդ իբր 'ի վա-
 նել զաւազակս եկեալ՝ առաւել ևս դու
 ազգաց ամենեցուն՝ որոց յաղթեցեր՝ աւա-
 զակողես , զաւար և զկապուտ նոցա կալեալէ
 Սիլիգիա առեր , գրաւեցեր զԱսորիս , ու-
 նիս զՊարոս և զԲակտրիա , և մինչ 'ի ձըն-
 դիկս խորհեցեալ հասանել , այժմ՝ և առ խա-
 շինս մեր զագահ և զանկայուն ձեռագ կար-
 կառես : Արջափ յաւելուս տիրել բազմաց ,
 ուժգին ևս որոց ոչ տիրեցերն՝ ցանկասցիս :
 Չ՛ յիշէս քանի՛ ժամանակք են՝ զի զԲակտրեօք
 դեգերիս , և 'ի նուաճելո՞ զդոսա՝ Սոգդիք
 ապստամբեն . 'ի յաղթութենէ ծնանի քեզ
 պատերազմ : Լ՛ղէ՞ անց ընդ Յաբսարս , և 'ի
 միտ առցես՝ չո՞ր զայր դաշտքս մեր տարածա-
 նր՞ծ : Զարածեսցես զԱյլի-թս , այլ ոչ հաս-
 ցես

ցես նոցա . աղքատութիւնս մեր արագագոյն
 գացի քան զբանակդ աղխաղխեալ աւարաւ
 բազմութեան ազգաց , և մինչ հեռի կարծի-
 ցես զմեզ 'ի բոյր տեսանիցես ճամբար . նովին
 երագութեամբ հասանեմք և 'ի փախուստ
 դառնամք : Օսկիւթացւոց անապատս լսեմք
 յառակս 'ի ծաղը լեալ առ ձեւլենս . կարբե
 իսկ քաջ , սիրեմք զանապատս մեր քան զձեր
 փարթամ քաղաքդ և զճոխ անդաստանս : Դուր
 դու ինձ , դիւրասահ է բաղդ . պինդ կալ ըն-
 քոյդ , գուցէ զերծիցի 'ի ձեռաց . դեր
 սանձ բարեբասութեան քու՛մ . նուաճել զդա՛ւ
 Եթէ Լատուած իցես՝ բարի արա՛ մահկանա-
 ցուաց , և մի՛ զնոցայն յափշտակեր . իսկ եթէ
 մարդ՝ խորհեաց զի միշտ նոյն իսկ ես : Օորս
 'ի խաղաղութեան թողուս , նոքա սերտիւ
 բարեկամք լիցին քեզ . հաստատուն է ընդ հա-
 ւասարս բարեկամսութիւն , և հաւասարք թու-
 ւին՝ որոց ոչ զըրուութեան միմեանց զվորձ ա-
 ռեալ է պատերազմաւ : Օգոյշ լի՛ր չհամա-
 րել՝ որոց յաղթեցերն՝ բարեկամս քեզ . ընդ
 տէր և ընդ ստրուկ չիք բարեկամութիւն , և
 բռնի խաղաղութեանն հասցէ զհետ պատերազմ :
 Մի՛ կարծեր թէ երդմամբ զդաշն հաշտութեան
 կոեսցեն Սկիւթք . նոցա երդումն՝ անդրծելի
 հաւատք են : ձեւլենաց 'ի դէպ է այդ զըու-
 շութիւն , երդմամբ կի՛քել զդաշինս , և զդիս
 կոչել վկայ . այլ մեր երկիւղածութիւն 'ի հա-
 ւատս է : Մի՛ մարդկան դրժ է՝ խաբէ և զդիս .
 և ի՛մ պէտք իցեն բարեկամի՛ յոր չիցես վտահ
 Լուս զմեզ և Լսիւյ և Լուրոպայ պահապանս
 կալցիս , մինչև 'ի թրակիս սահմանք են
 մեզ , և զԹրակիս կից 'ի Սակեդոնիս 'ի
 համ

Համբաւոյ գիտեմք . և հուպ իսկ եմք Ռակո-
րիոյ, Յաքոսարտեաւ անջըպեսեալ: Արկուստեք
սահմանակիցք եմք . արդ աղէ՛ թշնամիք թէ
բարեկամք կամիս՝ թէ իցեմք:

Ապրտանայ, Սախի՛նէսնի՛ Սդարադէտի Չասոյ՛ Խրամ
Խոստիան բանք աւ զօրսն :

Քաղում առտերազմունս մղեալ է իմ,
և ձեր ընդ իս. է ուրեք զի քաջապէս յաղթե-
ցաք թշնամեայն, և է՛ ուրեք՝ զի նոքա մեզ
յաղթեցին, և բազում այն է՛ ուր յաղթող
գտեալեմք և ոչ յաղթեալք . և միանգամայն
այն ամենայն՝ մարմնոյ պարծանք էին . քանզի
հրամանաւ անցաւոր թագաւորի մարտն չէաք ՝
Եւ որ վախչէր, վատանուն յաշխարհի երև-
էր, և անողորմ մահ՛ ՚ի նմանէ գտանէր :

Իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր՝
քաջ անուն ազգի ժառանգէր . և պարգևս
մեծամեծս յանցաւոր և ՚ի մահկանացու թա-
գաւորէն ընդունէր : Եւ մեք իսկ աւասիկ
յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէր և սպիտ
բազումս, և բազումայն՝ քաջութեան իցէ .
վասն որոյ առեալ է պարգևս մեծամեծս .
անարդ և անագուտ զքաջութիւնսն համարիմ,
և առ ոչինչ զպարգևն բազումս . վասն զի
խափանելոյ են ամենեքեան :

Իսկ արդ՝ եթէ վասն մահկանացու հրամա-
նատուին զայս արիութիւն. կատարէաք, որչափ
ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ,
որ հէր է կենդանեաց և մեռելոյ . և դա-

ձեռնը է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց Թ.

ՆՅՆ ԲԱՆ:

Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ձերացայց, սակայն ելանելոց եմք ՚ի մարմնոյ աստի . զի մտցուք առ Աստուած կենդանի որ ոչ ևս ելանիցեմք ՚ի նմանէ : Արդ տղաչեմք զձեզ, քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բաղուժք ՚ի ձէնջ լաւագոյն են քան զիս արուժեամբ և գահու ՚ի վեր ըստ հայրենի պատուոյն . բայց յորժամ ձերով կամօք և յօժարուժեամբ առաջնորդ և զօրավար ձեզ կացուցիք՝ հեշտ և բաղձալի թուեացիք քանքս իմ ՚ի լսելիս մեծամեծաց և փոքունց Թ.

Ա՛ր՛ երկուցեալ զանգիտեսցուք ՚ի բազմութենէ ձեթանոսացն . և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուցուք : () Ի եթէ տացէ Տէր յաղթութիւն ՚ի ձեռս մեր՝ սատակեսցուք զզօրութիւն նոցա . զի բարձրացի կողմն ճշմարտութեան : Այլ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս՝ ընկալցուք խնդութեամբ սրտի , բայց միայն յարութիւն քաջութեանս վատութիւն մի՛ խառնեսցուք : Ա՛ռնաւանդ զի անմոռաց է ինձ յիշելով զիմ և զոմանց ՚ի ձէնջ ՚ի ժամանակի, զի զանօրէն իշխանն խաբեցաք և պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան , իբրու այն թէ՛ ՚ի վերին երեսս զկամս նորա ամբարշտութեանն կատարեցաք, բայց ՚ի ծածուկ խորհուրդս մեր՝ Տէր

Ինչն զի աստիճանայ է մեզ թէ որպէս անքակ կայնալ
 եմք ՚ի նմանէ : () որ և դուք ինքնին իսկ գի-
 տէք վասն սիրելեացն մերոց՝ որ ՚ի մեծ նեղու-
 լեեանն էին, հարս ինդրէաք յանդ որր հանել
 զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կուսիցիմք
 ընդ անարէն իշխանին վասն հայրենի օրինացն :

Ն Ե Ն Բ Ա Ն

Եւ իբրև նոցա ոչինչ կարողաք օգնել
 անհնար լիցի այս՝ եթէ վասն մարմնաւոր սի-
 րոյ զլստուած ընդ մարդոյ փոխանակեմք :
 Իսկ արդ յերկուս և յերիս կուս՝ հէրն ինք-
 նին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս
 զանուն քաջութեան ժառանգեցաք, զզօրն
 արքունի չարաչար հարաք, և զմոգան անողորմ
 սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտու-
 թեանն ՚ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօ-
 բէն հրաման թագաւորին եղծաք, ապականե-
 ցաք, զխառվութիւն ծովուն ցածուցաք, լեռ-
 նացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ վրժ-
 փուրն պայթեաց, գազանացեալ սրտմտութիւնն
 դադարեաց :

Որ ՚ի վերայ ամպոց որոտայր՝ նկուն
 եղեալ գառա ՚ի ներքոյ քան զսովորական
 բնութիւնն ընդ մեզ խօսելով : Որ բանիւ
 հրամանաւ կամէր զմեզ կորուսանել, և կա-
 տարել զչարութիւնն ՚ի վերայ սուրբ եկե-
 ղեցոյ՝ արդ աղեղամբ և նիզակաւ և սրով
 կուսիս Որ իբրև զհանդերձ կարծէր մեզ ու-
 նել զՔրիստոնէութիւնն՝ արդ իբրև զգոյն
 Ի

* Ի մարմնոյ չկարէ յըջել թերևս և ոչ այլ
 կարասցէ մինչև ՚ի կատարած: Քանզի հիմունք
 նորա հաստատութեամբ եղեալ են ՚ի վերայ
 վիմին անշարժութեան. ոչ ՚ի վերայ երկրի՝ այլ
 ՚ի վեր յերկինս, ուր ոչ անձրևք իջանեն, և
 ոչ հողմք շնչեն, և ոչ յեղեղ յարուցանեն . . .
 Եւ արդ եկն եհաս ժամանակ՝ զի զամենայն
 զկեղա անունդ ՚ի մէջ ՚ի բաց բարձցուք:
 Յայնժամ թախծեալ սգաւորք՝ իբրև յոգի
 և ՚ի մարմին էաք տրտմեալք. և այսօր զար-
 թուցեալք զուարթացեալք յերկոսեանն՝ առ
 հասարակ եմք լըջացեալ. քանզի և զբարերար
 Տէրն ընդ մեզ տեսանեմք յառաջնորդու-
 թիւն: Չէ մեզ մարդ զօրալար, այլ () օրա-
 գլուխն ամենայն մարտիրոսաց:

Երկիւղ թերահաւատութեան է նշանակ.
 զթերահաւատութիւնն մեք ՚ի մէջ վաղ մեր-
 ժեցաք, ընդ նմին և երկիւղ փախիցէ ՚ի մտաց
 և ՚ի խորհրդոց մերոց:

Ինասպան բան, կալիսիսիսեա, շէտանդի գծէք

Երկանիմ զլլեքսանդր և է արժանի
 ամենայն փառաց՝ որ վայել են մարդկան. այլ
 բազում ինչ խախր է ընդ պաշտօն գիցն և ընդ
 մարդկան: Երցա մեհեանք վայել են և բազինք
 և ուխտք և զհնքսոցա գովութիւնք և մեծա-
 բանք: () թագաւորս ողջունեմք, և հնազան-
 ղիմք եոցա կամակար, և հպատակ կամք և
 հաւատարիմք նոցա. այլ գիցն երկիրպագա-
 նեմք:

ներմք, տօնս յօրինեմք և երգս և օրհնութիւնս
 նուագեմք: Նա աւանիկ և զիցն այլ և այլ
 պաշտամունք են ըստ պայմանի մեծութեան
 նոցա. զի զկատար և զՊօղոսեւկիս՝ ոչ որպէս
 զձերմէս և զՎիոս պաշտեմք: Սի՛ խանգա-
 րեսցուք զկարգն. զից՝ զմահականացուացն տա-
 լով և մահականացուաց՝ զզիցականն: () զիցա-
 նուէր անձին արքայի զպատշաճ պաշտօնն այ-
 լում որ ընծայեալ՝ ոչ ապաքէն ՚ի ցասումն
 դրդիցէ զարքայ. իսկ ՚ի զիցն ցասմանէ ոչ
 զանգիտիցեմք՝ զանհաղորդականն նոցա պաշտօն
 մահականացուաց տալով:

Արատիան բան: Կոթիս ըագատորժ աա սրգիս էւրժ

Ո՛չ յընդարձակութիւն աշխարհաց և ոչ
 ՚ի բազում զօրս և ՚ի մեծութիւնս է հաս-
 տատութիւն տէրութեան, այլ յերկիւղածու-
 թիւն ՚ի զիցն, ՚ի միաբանութիւն եղբարց, և
 ՚ի յաճախել բարեկամս: Պատուիրեմ ձեզ
 որդեակք, յանուն զից՝ մեծարել զմիմեանս,
 եթէ ցանկայք և յետ մահու հաշտ ունել
 զիս: Բանզի յուսացեալ եմ՝ թէ ոչ կար-
 ծիցէք չ՝ քանալ ինձ մահուամբ: Թէպէտ և
 աներկուցթիցէ հոգիս, այլ ՚ի գործոց նորա
 հաւաստիք գոյութեանն աներկուանալի: Այա-
 քէն այսու կենօքս սահմանէր պատիւ այնոցիկ
 որոց մարմինք յաճիւն լուծան, եթէ հոգիք
 նոցա անբաժք էին յամենայն զօրութենէ:
 Զորդին կենդանի ՚ի մահականացու մարմնի
 չ՝ մարթի մեռանել անջատեալ ՚ի նմանէ: Աւ-
 թէ

Թէ խաբիմ, և չ'ապացեմ յետ մահու, սակայն
 'ի դիցն անմահից երկերուք՝ յամենաատիցն
 և 'ի հզորաց: Ի նոցանէ երկերուք, և ոչ ինչ
 հակառակ կրօնից և արդարութեան գործիցէք
 կամ թէ խորհիցիք բնաւ: Եւ 'ի մարդկանէ
 յետ դիցն երկերուք և 'ի հանդերձելոցն
 ժամանակաց: Այլ թողին զձեզ դիք ծածկեալ
 'ի խաւարի, այլ 'ի թատր մեծ ածին 'ի տե-
 սիլ ամենայն աշխարհի: Եւ թէ իցեն գործք ձեր
 ուղիք և սուրբ՝ անշուշտ յաւելցին ձեզ փառք և
 զօրութիւն: Իսկ զդիակն իմ, որդեակք, մի
 ոսկւով պատէք կամ արծաթով կամ այլ ինչ
 պատուական նիւթով, այլ փութայք տուք
 զնա հողոյ: Բան զխառնել և միանալ ընդ
 բարերարի մօր հասարակաց՝ զինչ այլ բարի
 կայցէ: Մնայք խաղաղութեամբ որդեակք իմ
 սիրելիք. տացեն ձեզ դիք աւուրս բարու-
 թեան, և զողջոյնս զայս յետին տուք և մօր
 ձերում յինէն: Եւ դուք, բարեկամք հաւա-
 տարիմք, որք աստ մօտ առ իս կայք և որ հե-
 ռի, ընկալարուք զողջոյնս վերջին, և կեցցիք
 խաղաղութեամբ:

Կի՛իէ: անի ճաս ասաջին Կասիւլինեան:

Մինչև ցերբ, ասէ, Կասիւլինա, զեղծա-
 նիցիս մերովս երկայնմտութեամբ. մինչև ցերբ
 կատաղութիւն ք՝ այլ խաբխաբէ զմեզ և զհա-
 սարակապետութիւնն: Այլ դադարեսցի երբէք
 ք՝ ապարտասան յանդգնութիւն այսոանել զմեզ:
 Իսկ զիարդ, ոչ սարսիցիս, ոչ սասանիցիս, ոչ
 յան

յանսովոր զգուշաւորութենէ զեռեղելոյ գի-
 շերայն գունդս զրոպց 'ի լերինն Պալատինոյ .
 ոչ 'ի գիշերապահ պահպանութենէ՝ որ կայ 'ի
 բովանդակ քաղաքիս . ոչ յարհաւրաց հա-
 սարակաց . ոչ 'ի խոնելոյ բարեացապարտից որք
 առ հասարակ միաբանեալ են ըդդէմ քեզ
 և ոչ 'ի տեղւոջէս՝ 'ի մէհենէ Վիոսի Ստա-
 տորի, որ ընտրեցաւս 'ի մէնջ առ առնելոյ
 զայ՝ ժողով վասն լինելոյ նորա ամրապահեստ,
 և ոչ յերեսաց և 'ի հայեցուածոց ամենե-
 ցուն սոցա՝ որք լսեն ինձ և որք խոժոռա-
 հայեաց են 'ի քեզ: Աջ իմանաս, թէ քո խոր-
 հուրդք յայտնեալ ենն Աջ գիտես, թէ քո դա-
 ւադրութիւն ծանուցեալ այսօր ամենայն
 հանդիսականաց ժողովոյս՝ արդէն 'ի հաղթա-
 է ըմբռնեալ: Կարծիցես, թէ ոք 'ի մէնջ անգէտ
 իցէ ամենայնի՝ զոր արարեր յայսմ և յանցե-
 լում գիշերի: Աւր էլր, ընդ որս խորհուրդ
 կալար . և զի՞նչ որոշումն եղև առ 'ի քէն:
 Ավ ժամանակիս . ով սովորութեանցս: Ծե-
 բակոյտն տեղեկացեալ է այս ամենայն իրաց .
 հիւպատոսն տեսանէ . և այրդ այդ տակաւին
 կենդանի է: Եւ զի՞ ասեմ դեռ կենդանի է:
 Պայ 'ի ծերակոյտն . ընդունելի լինի 'ի հասա-
 րակաց խորհուրդ . ընտրէ այժմ 'ի մէնջ . յակա-
 նէ յանուանէ նշանակէ զմի մի 'ի մէջ՝ իւր 'ի
 զենլիս 'ի խողխողել: Եւ մեք արիականք և
 ընտիր ըտիր քաղաքացիք՝ կարծեմք ընուոր-
 չափ ինչ պահանջէ 'ի մէնջ հասարակապետու-
 թիւնն, զի խորշիմք 'ի կատաղութե՛ն և 'ի
 դաշնակաց հուղիւհարիս Յմբէ, ուր
 լցեմք մեք . որպիսի ինչ իցէ առաջնորդութիւն
 մերոյ հասարակապետութեան . յո՞ր քաղաք կայ-
 ցեմք:

ցեմք: Այս տեւորք, յայսմ և ՚ի որչն փայրի, ՚ի մերում միջի, յայսմ օգուտապատիւ ընկերութեան, որ հասարակաց խորհրդարան է տեղեղեական, կան անձինք՝ որք խորամանկեն զիմ և զամենեցուն մեր մահ. որք խորհին զկործանումն քաղաքիս, որով և զամենայն աշխարհիս Աս ինձէն տեսանեմ զնոսա, ես՝ որ հիւպատոսս եմ, զկարծիս նոցա հարցանեմ վասն հասարակաց իրողութեանց, և չիշխեմ բառիւ լոկով կծանել զայնոսիկ՝ զորս արժան էր այժմէն իսկ ընդ սուր հանել:

Առջիկ Պարբէհի յետ մահսան ինք իւրստ

Ո՛ր, որ ինամեքդ զազգ մարդկան, և ՚ի վերայ թագաւորաց և պետութեանց ունիք իշխանութիւն՝ առէք ինձ յանդորր հանել զբաղդ Պարսից և նովին փառօք՝ որով ընկալայ՝ թողու զայն զաւակի իմում, և յաշնոյ լեալ թշնամեաց՝ փոխարինել բարութեանցն Աշեքսանդրի, զորս յօժարեաց առնել ընդ կարևոր սիրելիսն իմ ՚ի նեղութեան իմում: Այս եթէ օրհաս վախճանին պետութեան Արեաց մերձեալ է, և ՚ի դիցն ցասմանէ կամ ՚ի հողդողէ հաստատութենէ մարդկայնոցս իրաց կործանեացի, շորհեցէք, զի դիք, Աշեքսանդրի և միայլ ումեք յաթոռն կիւրոսի նսգել:

Պշտանն իւրաքանչիւրէ Հասանց կրիս Մանսէէէ յիս
 ցաջ ան շահ իւր

Ասան զի հիւանդացեալ հիւանդութիւնս
 որով ՚ի մահն փութայր, և նախ քան զլախ
 ճանն՝ խոկաց զտէրունականն առակ, որ վասն
 տեսեալին՝ գիտելով զինքն անտես մեծի և աշ-
 խարհական հոգոց՝ կարգեալ Աստուծոց զոր
 կոչէր հասարակաց Տէրն պահանջել զհամար
 տեսեսութեան թագաւորական գործոցս
 ինդրեաց ապա առննթեր իւր գալ զԱրք
 Ապիսկոպոս մեծի քաղաքին հանդերձ բազ-
 մութեամբ Ապիսկոպոսացն, և ասէր Ա՛յլ Քա-
 հանայապետ Աստուծոյ լուր հանդերձ պաշ-
 տօնակցօք քովք սրբովք, անկոչէ զիս հասա-
 րակաց Տէրն առ ՚ի տալ զհամար տեսեսութեան
 թագաւորական իշխանութեանս. և ՚ի սաստիկ
 երկիւղէ նորին անաչառ ատենին՝ անկեալ կամ
 ՚ի մահիճս զարհուրեալ և գողացեալ, գիտե-
 լով յանձն, զի ոչ ունիմ զթիւ համարոյ հաւա-
 տացեալս ինձ գործոյ, քան զի պարտական եմ
 նմա իմացականօք և զգայարանօք, տալ զհա-
 մար երկաքանչիւրոցս: Արդ՝ որ ունիս իշխա-
 նութիւն կապելոյ և արձակելոյ՝ առ զգիր պար-
 տուց իմոց աղաչեմ, զոր տամ խոստովանու-
 թեամբ լեզուի իմոյ և յառաջանօք սրտիս, և
 թեթեացուցեալ Աստուածեղէն իշխանու-
 թեամբդ զճանրութիւն բերին իմոյ՝ առաքեալ
 զիս առ Տէրն իմ և Աստուած: իսկ
 յորժամ կատարեցաւ մահուամբ՝ ծփեալ ամ-
 բոխէր արքունականն քաղաք ՚ի վերայ նորա,
 որպէս զխառովեալ ծով. և ձայն ողբոց ՚ի բե-
 րան ամենեցուն, և ողբք արտասուաց:

ՊԼԱԽ ԼՅ՝



Ո՞՞՞՞՞՞՞՞՞՞՞

Պի Պերճապաէ Քրիստոսոսոջօր արտայն Հայոց՝ Է
սորէն Տրտառէս

Ծախըս հար հըրճուանօք՝ բարձրացեալը Այ՝
բարասա՝

Երփնագեղ սուրբ ծաղիօք՝ զարդարեալ զքոյր
գագաթօ.

Խրախուսեալ պարծանօք՝ յարքային մեր դը-
րուասա՝

Անթառամ ձիթենօք՝ պոակեալը Տըրդատ
Թաղակապ վեհազանց՝ շոռաւիզ ընտրական,

Սեծազօր կայսերաց՝ իսկաքանչ կերպարան.

Գերապանձ շնորհաց՝ լայնարձակ բնակարան,

Թորգոմեան մեր ազանց՝ նա պարծանք իսկական,

Կըրկնակի ճոխութեամբ՝ սըխրալի տիրասէս,

Կրոմի զօրութեամբ՝ ի վեր քան զԱբիլէս.

Սըսաւոր զգօնութեամբ՝ պերճացեալ մեծա-
պէս,

Գերազանց բարձրութեամբ՝ մեծ արքայն Տըր-
դատէս.

Ասոյեան սկայազօր՝ ի մըրցմունս մարտից,
Օաղթական քաջազօր՝ մեծամեծ արքայից.

Փայլեցաւ օր քան զօր՝ ի գումարս հանդիսից,
Թշնամեացն էր արհօր՝ և աշխար ցաւալից,
Երկպատիկ վահանաւ՝ մառեցաւ զԲահաւոր,
Սնութեղէն սուսերաւ՝ և խաչիւ ւահաւոր.
Ասոյեան գիմագրաւ՝ Թշնամեաց բիւրաւոր,
նուաւ

Նաւաճեալ ընդ իւրեալ միշտ յաղթող պատա-
կաւորս
Ըլ լճսեմ յաղթանակ՝ նա յայնժամ բարձրա-
ցոյց»

Սինչ յորս լուսատուին՝ զանձն իւր կորացոյց.
Օրն տանի թշնամին՝ գլխովին մահացոյց,
Կաճեցաւ մեր ազին՝ սրբութեան տարացոյց»
Ընդ արքունի ծիրանեօք՝ կրօնաւոր ճգնազ-
գեաց»

Ըլ թիւք և պահօք՝ միտնձանց զուգընթաց.
Ըլ մարմնոյ ճշգրտեօք՝ քան զնոսա գերազանց»
Երկրաւոր սուրբ կենօք՝ նրմանեալ հրեշտակաց.
Քաջայտլ թ մեր հովուին՝ նա բազուկ ուժ ըն-
դակ»

Կրծանեաց զբանսարկուին՝ հաստահիմն ամ-
բարտակ.
Ծաւալեալ զլոյս վերին՝ յազգս մեր բովան-
դակ»

Բարձրելոյ Արարչին՝ լեալ ճշգրիտ նահատակ
Ի յերկրէ վերձեմեալ՝ յառագաստ մտուղ-
փեան»

Օտարչէն ընկալեալ՝ ըղպրաակ կարմրեցիեան.
Ասան որոյ խրախուսեալ՝ ազգ նացոյց միաբանս
Ընդ սցուք պրսակեալ՝ զցանկալի մեր արքայն»

Ձեռքս նխարագրէ շրշրե՛ն ինչ ի պահս - Տրոյա-
նան դատերաշին»

Ըլ պայն ինչ և դից անմահից ըն պար
Նոսան ընդ մահացուաց իջին ՚ի գուպար,
Ըլ խոյժ ք երկուստեք զարթեան արութեան,
Ըլ -

Հբօինդն և զայրոյթ, ճողաղէք արեանս
 Ըստուստ 'ի ցասուանս Լթեհնաս Պալլաս
 Օիւրոց Լլլադեանց բորբոքեր ըլդաս,
 Եւ անդուստ Լթէս ասեղաբարբաս,
 'Ի խիտ մառախուղ և յամպրոպ խաւար,
 Յեղիտնական ամրին 'ի բարձանց
 Կատխոյս տայր անդուլ Տեկրեան պատանեաց
 Ըրպէս 'ի ճակատ արիւնոտ կըռուոյն,
 Գըրգիւ քաջալերք անմահից պարուն
 Օտքայեանց գընդին և զՏեկրեանցն աշխոյթ
 Սառեալ բորբոքեն յեռանդն ապաժոյթ:
 Որոտաց ասեղ յՊղէմպեայ բարձանց
 Լնմահիցըն հայր և մահկանացուաց,
 Եւ յանդընդախոր 'ի հիմանց անտի
 Հարժեաց Պիսիդոն զերկիր վիթխարի,
 Բզբարձրածայրեալ Լերանց ըսպառուած
 Յիւր երեքժանուոյն գըրդուեալ 'ի հարուած:
 Հարժ լին խորաձոր Խդեան դաշտավայրք,
 Գագաթունք բըլրոց ճօճին երկնածայրք,
 Պատնէշք Լթայեան գըրդուին նաւակերտք,
 Պարխսպք և պատուարք տատանին և բերդք:
 Սոսկացաւ Պղուտոն, և երկիւղալից
 Ստուցեալ 'ի վեր յիւրոց գահոյցից,
 Դատարեաց, գոչէ առ շարժմանն առիթ,
 Չըգել զերկրաշարժ քո զերեքժանիդ,
 Գուցէ պատառես արդ զերկիր համակ
 Եւ հաստակառոյցդ այդ բացեալ յատակ,
 Լնմահից պարուն և մահկանացուաց
 Վիտեցեն վերուստ աչք 'ի ստորերկրայս,
 'Ի նըսեմաստուեր տեսիլ ասարկու
 Տարտարոսական մըթապատ գահու,
 'Ի տըխուր ոգւոց կայս մըշտագիշեր,
 Եւ դիցն անմահից գուղ դըժ ուրմբեր:

Արդեւ յԵնդեմանիս արարեալ է իմ անբարե-
շնորհս Պաւլոսի անկէշոյ 'ի ծով 'ի նաւէն առ-
տէր էր:

Ապա 'ի ծովափն արդ զիս մըղէ, կոծէ զգի-
ակն իմ ալէք

Երդ փնեցուցեալ ըզքեզ 'ի զուարթ լոյս եթե-
րին և 'ի սիք:

Յանուս ծնողիդ քո և Յուլեայ մանկանդ 'ի
յոս գեռափթիթ:

Ոչս յարեալից ասաի զերծո, քանզի կարես
կորովիդ:

Ալ զինև հող, և Ալէնեան 'ի նաւախոյս
էրթ ըզկինի

